

Քաղաքականություն

20-րդ դարի ցեղասպանությունների մասին գրքի հեղինակը կարող է պետքարտուղար դառնալ Հիլարի Քլինթոնից յետոյ

Արգենտինայի դատարանի դատավճիռը. Թուրքիան մեղաւոր է Հայոց ցեղասպանութիւն գործելու մէջ

Հայազգի Պեդրոյ Սուրադեանը նշանակուել է Արգենտինայի իտրականութեան դէմ պայքարի գծով քարտուղարի տեղակալ

Յովիկ Աբրահամեանը Շուեյցարիայ այցելութեան ժամանակ զգացել է հայ համայնքի նկատմամբ լաւ վերաբերմունքը

Ֆրանսիայի ԱԺ պատգամաւոր Ռընէ Ռուքեն կոչ է անում իր երկրին յարգել ԼՂՀ ինքնորոշման իրաւունքը

Ցեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ Հայաստանը պէտք է պաշտօնապէս բարձրացնի ստեղծուած Հայկական հարցը

Բակոյ Սահակեանը կարելորել է Արցախի երիտասարդների կապը Հայաստանի եւ Սփիւռքի հետ

Սինգապուրի ԱԳՆ ղեկավար Ջորջ Յէոն պատրաստ հնարաւորինս աջակցելու հայ-սինգապուրեան կապերի ակտիւացմանը

Սեդրակ Աճեմեան. Ղարաբաղեան պատերազմի վերսկսումն անկանխատեսելի հետեւանքներ կը բերի տարածաշրջանի համար

ՀՀ սփիւռքի նախարարութիւն

«Ցաւի, յիշողութեան եւ պայքարի կոթողներ»

ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը հանդիպեց աւստրալահայ գործարարների հետ

Աւստրալիայի խորհրդարանականների հետ հանդիպմանը ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը բարձրացրել է Հայոց Յեղասպանութեան ճանաչման եւ Լեռնային Ղարաբաղի անկախութեան հարցերը

ԲԱԹՈՒՄԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆ ՈՒ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ սփյուռքի նախարարությունում
անցկացուեց Երամիության Թուինինգ եւ
Թայերս ծրագրերին նուիրուած սեմինար

Հրանոյշ Յակոբեանը մասնակցել է
Սինգապուրի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ
Հայ Առաքելական եկեղեցու 175-ամեակի
միջոցառումներին

«Հայերի փոքր համայնքը երկրի թագի
գարդերից է»

ՀՀ սփյուռքի նախարար Հրանոյշ
Յակոբեանը մասնակցեց Սինգապուրի
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու եւ հայ
համայնքի հիմնադրման 175-ամեակին
նուիրուած տօնակատարութիւններին

Սփյուռք

Կալկաթայում նշուեց Հայոց
մարդասիրական ճեմարանի հիմնադրման
190-ամեակը

Մարիայ Մեիրանեանը նշանակուել է Կալիֆորնիայի Ցեղասպանութեան գծով միջազգային յանձնաժողովի անդամ

Մոնտեբելոյի ատոմայրուղում տեղադրուել է ճանապարհային նշան, որն ուղղորդում է դէպի Հայոց ցեղասպանութեան յուշարձան

Համազգայինը Գումարել է Շրջանային Ժողով Եւ Ընտրել Նոր Ղեկավար Կազմ

Լիբանանում տեղի կ'ունենան միջոցառումներ` նուիրուած Այնթապի հերոսամարտի 91-ամեակին

«Ազգ». ԱՄՆ-ում սկսուել է Ցեղասպանութեան ճանաչման արշար

ՎԻԳԵՆ ՉԱԼԴՐԱՆԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ

Էթնիկ հայ Դարոն Աճեմօղլուի նշանակումը Ֆրանսիայում Թուրքիայի դեսպան Էրդողանի PR-քարոզարշարի մի մասն է

Ամերիկացի կոնգրէսական Ադամ Շիֆի ընտրատարածքում «տարուայ կ'ինէ տիտղոսը շնորհուել է Մարօ Քեշիշեանին

Հայազգի Աջեմօղլուն հրաժարուել է Փարիզում Թուրքիայի դեսպանի

պաշտօնից՝ պատճառաբանելով գիտական աշխատանքը

2012 թուականին Պերմի երկրամասում կ'աւարտուի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու կառուցումը

Սանկտ Պետերբուրգի հայ համայնքը «միսս հայկական մարգարիտէ մրցոյթում կ'ընտրի ամենագեղեցիկ հայուհուն

Պիեռ Ֆատտուշը միաձայն ընտրուել է Լիբանան-հայաստան բարեկամական ասոցիացիայի նախագահ

Սինգապուրի հայ համայնքը մեծ շուքով նշել է երկրի ամենահին քրիստոնէական եկեղեցու 175-ամեակը

Իրավիճակը Դամասկոսում հանգիստ է, սիրիահայ համայնքում հաւաստիացնում են, որ իրենց ոչինչ չի սպառնում

Հայկական Բարեկենդանը՝ Դանիայի հայ համայնքում

Հասարակութիւն

Վերջին երեք տարում Արցախ է տեղափոխուել 440 ընտանիք, որոնցից 130-ը՝ միայն անցեալ տարի

Ստամբուլի դատարանը մերժել է Դինքի ընտանիքի փաստաբանների՝ Օգիւն Սամաստի հորը նիստին կանչելու պահանջը

Վրաստանի հայկական դպրոցներում կը վերականգնուի հայոց լեզի դասաժամերի նախկին ծաւայը

Արցախեան ազատամարտի հերոս Դմիտրի Մօտրիչը ՀՀ նախագահի անունից յետմահու պարգևատրուել է «արիութեանէ մեդալով

Օրհան Փանուրը Հայոց ցեղասպանութեան մասին իր խօսքերի համար պէտք է վճարի 4000 դոլար

Մշակոյթ

Էմմի երատեսիլեան փրոմո-արշար յազեցած է, նա կ'այցելի Կիւն, Քիշնեւ, Նիդեռլանդներ, Աթէնք եւ Վարշաւայ

Նիդերլանդներում տեղի կ'ունենայ
Ցեղասպանության 96-ամեակին նուիրուած
նգեկոչման համերգ

Հրաչ Թիթիզեանը Բրոդուեյում խաղում է
Ուդեյ Յուսէինի ուրուականի դերը, որը
յայտնում է զինուորին՝ Ռորին Ուիլեամսին

PBS-ի եթերում Տլորիդայում ցուցադրուելու
է «հայոց ցեղասպանութիւնէ
փաստագրական ֆիլմը

Լայզայ Մինելին, Էլթոն Չոնը, Սելին Դիոնը
իրենց ներկայութեամբ կը պատուեն
Ազնաւորին նուիրուած միջոցառումը

Արթուր Աբրահամը Boom-Boom երգի
տեսայլովակի գլխաւոր հերոսն է, որը
Էմմիի կատարմամբ կը հնչի Եւրատեսիլում

Ռուս ընթերցողի դատին կը ներկայացուի
«գրիգոր Նարեկացին եւ Միջնադարի
հոգեւոր մշակոյթը՝ գիրքը

Դերասան Օնիկ Կեցոյեանը մասնակցում է
Աթէնքի գլխաւոր ներկայացումներից
մէկում

Մպորտ

Ռոման Ամոյեանը Եւրոպայի յունա-
հռոմէական ըմբշամարտի չեմպիոն է
դարձել

Յայտարարութիւններ

ՀՐԱԻԻՐՈՒՄ ԵՆՔ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
«Վերածնունդէ Երաժիշտ-կատարողների
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ Մրցոյթ-փառատօնին

Քաղաքականութիւն



20-րդ դարի
ցեղասպանութիւնների
մասին գրքի հեղինակը

կարող է պէտքարտուղար դառնալ
Հիլարի Քլինթօնից յետոյ

2011-04-04

The New York Times-ի կարծիքով, Սամանտայ Փաուերը Հիլարի Քլինթօնի հետ Լիբիայի նկատմամբ քաղաքականութեան գլխաւոր ճարտարապետն է եւ նրա ազդեցութիւնը Սպիտակ տանն օրրստօրէ աճում է: Եթէ Քլինթօնը հրաժարական տա, ապա Փաուերը ԱՄՆ

արտաքին քաղաքական գերատեսչության
ղեկավարի պաշտոնի առաջին թեկնածուներից կը
լինի: Բայց դա այն դեպքում, եթե Օբաման յաղթի
ընտրություններում:

Փաուերը սկսել է իր լրագրողական
գործունեությունը Բոսնիայում, երբ 22 տարեկան էր
եւ եղել է երկրագնդի համարեա բոլոր թէժ
կետերում: Նա 2002-ի Պուլիտցերեան մրցանակի
յաղթող է «խնդիր դժոխքիցէ
ցեղասպանությունների մասին գրքի համար, որում
պատմում է նաեւ ցեղասպանութեան հանդէպ
ԱՄՆ արտաքին քաղաքականութեան
դիրքորոշման մասին:

«հայաստանում, նացիստական Գերմանիայում,
Կամբոջայում եւ Ռուանդայում
ցեղասպանությունները տեղի են ունեցել այն
պատճառով, որ պետական իշխանությունները
դրա վրայ աչք են փակել, իսկ առանձին մարդիկ
ընտրել են չմիջամտելու քաղաքականությունը:
Ամենատարածուած պատասխանն է՝ «մենք
չգիտենք: Դա սուտ է,- կարծում է Սամանտայ
Փաուերը:



Արգենտինայի դատարանի

դատավճիռը. Թուրքիան մեղաւոր է Հայոց ցեղասպանութիւն գործելու մէջ

2011-04-02

Ինչպէս գրում է The Washington Post թերթը, դատավճռում ասում է, որ Թուրքիան պարտաւոր է օգնել Ցեղասպանութեան զոհերի Արգենտինայում բնակուող ժառանգներին տեղեկութիւններ ստանալ մօտ 50 հազար հարազատների մասին, որոնք անյայտ կորել են Ցեղասպանութեան տարիներին: Սակայն, տուեալ որոշումը զուտ յայտարարութեան բնոյթ է կրում:

Թուրքիայի դեսպանատունը Բուենոս Այրեսում դեռ չի մեկնաբանել արգենտինական դատարնի որոշումը:



Հայազգի Պեդրոյ Մուրադեանը նշանակուել է

Արգենտինայի խտրականութեան դէմ պայքարի գծով քարտուղարի տեղակալ

2011-04-02

Ինչպես գրում է Բուենոս Այրեսի հայկական «արմենիա» թերթը, ապրիլի 1-ին, ներկայացնելով նոր փոխարտուղարին, Արգենտինայի արդարադատության նախարար Խուլիոյ Ալակը յայտարարել է, որ Մուրադեանի նշանակումն այդ պաշտոնում կը նպաստի արգենտինական օրենսդրության կատարելագործմանը խտրականության եւ ռասիզմի դեմ պայքարի հարցերում: Իր հերթին Պեդրոյ Մուրադեանը պատրաստակամութիւն յայտնեց շարունակել աշխատանքն այդ ուղղութեամբ:



Յովիկ Աբրահամեանը Շուեյցարիայ այցելութեան ժամանակ զգացել է հայ համայնքի նկատմամբ լաւ վերաբերմունքը

2011-04-01

Ողջունելով հիւրին՝ ԱԺ նախագահը կարեւորեց նրա այցը երկու երկրների միջեւ յարաբերութիւններն ամրապնդելու եւ զարգացնելու առումով: ԱԺ նախագահը նշեց, որ Շուեյցարիայ կատարած իր պաշտօնական այցի ժամանակ զգացել է, թէ ինչքան լաւ են տրամադրուած Շուեյցարիայի իշխանութիւնները

հայկական համայնքի եւ ընհանրապէս հայ
ժողովրդի նկատմամբ:

Շուեյցարիայի Համադաշնութեան նախագահը
շնորհակալութիւն յայտնելով ջերմ
ընդունելութեան համար՝ նշեց, որ վերջին
տարիներին երկու երկրների միջեւ
յարաբերութիւնները բաւականին սերտացել են,
ինչի վկայութիւնն են նաեւ բարձր մակարդակով
տարբեր փոխայցելութիւնները, ինչպէս նաեւ
Հայաստանում Շուեյցարիայի դեսպանատան
բացումը:

Նրա խօսքերով՝ Երեւանում դեսպանատուն
բացելը վկայում է Հայաստանի հետ
յարաբերութիւններն ամրապնդելու՝ Շուեյցարիայի
ցանկութեան մասին: Շուեյցարիայի Նախագահը
նշեց, որ իրենք Հայաստանում իրականացնում են
ծրագրեր տարբեր ոլորտներում եւ այսուհետ եւս
մտադիր են շարունակել փոխգործակցութիւնը
տարբեր ուղղութիւններով:

Հայաստանի խորհրդարանի ղեկավարը նշեց, որ
դեռ կառավարութիւնում աշխատած տարիներից է
ծանօթ Շուեյցարիայի կողմից Հայաստանում
իրականացուող ծրագրերին՝ նաեւ համակարգելով
դրանք: Յովիկ Աբրահամեանը նշեց, որ

Հայաստանը որդեգրել է եւրոպական ընտանիքին ինտեգրուելու քաղաքականութիւն. ակտիւ քայլեր են կատարուում բարեփոխումների իրականացման, մեր երկրի օրէնսդրութիւնը եւրոպական չափանիշներին համապատասխանեցնելու ուղղութեամբ: Աշխատանքներ են իրականացուում եւրոպական կառոյցների, այդ թւում՝ Եւրոպական խորհրդարանի հետ:

Միջեւին Կալմի-ոելը նշեց, որ Շուեյցարիան շնորհակալ է Հայաստանին՝ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացում իրեն միջնորդի դեր վստահելու համար: Նա ասաց, որ Հայաստանի իշխանութիւնները քաղաքական մեծ համարձակութիւն դրսեւորեցին՝ նախաձեռնելով եւ ստորագրելով հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորմանն ուղղուած արձանագրութիւնները: ԱԺ նախագահ Յովիկ Աբրահամեանը կարեւոր համարելով Շուեյցարիայի հետ յարաբերութիւնների զարգացումը բոլոր ոլորտներում՝ բարձր գնահատեց այդ երկրի ջանքերը հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման ուղղութեամբ: Նշելով, որ ՀՀ ԱԺ Հայաստան- Շուեյցարիայ պատգամաւորական բարեկամութեան խմբի

անդամներն ակտիւօրէն համագործակցում են իրենց շուէյցարացի գործընկերների հետ՝ ԱԺ նախագահն ընդգծեց շուէյցարական խորհրդարանի հետ կապերն ակտիւացնելու անհրաժեշտութիւնը: Յովիկ Աբրահամեանի խօսքով՝ այսօր առաւել քան երբեւէ կարելոր է խորհրդարանական դիւանագիտութեան դերը: Շուէյցարիայի Նախագահը համակարծիք էր ՀՀ Ազգային ժողովի նախագահի հետ՝ կարելորելով պատգամաւորական բարեկամութեան խմբերի դերը երկու երկրների միջեւ յարաբերութիւնների զարգացման գործում:

Միջեւին Կալմի-ոէյը նշեց, որ Շուէյցարիան մեծ կարելորութիւն է տալիս այս տարածաշրջանին՝ իրականացնելով միջնորդական գործունէութիւն տարբեր երկրների միջեւ:

Հանդիպմանն անդրադարձ կատարուեց նաեւ երկկողմ հետաքրքրութիւն ներկայացնող այլ հարցերի:

Տրանսիայի ԱԺ պատգամաւոր Ռընէ Ռուքեն կոչ է անում իր երկրին յարգել ԼՂՀ ինքնորոշման իրաւունքը

2011-04-01

«Արաբական ժողովուրդների կողմից իրենց ազատութեան համար մղուող պայքարի շուրջ վերջին շաբաթների իրադարձութիւնները թոյլ են տալիս բազմաթիւ դասեր քաղել: Դա շարժում է՝ յանուն ազատութեան, որի ճակատագիրը որոշում է հէնց մեր աչքերի առջեւ, մեզ յիշեցնում է ժողովուրդների ձգտումները հասկանալու եւ յարգելու անհրաժեշտութեան մասին, քանի որ ժողովրդավարութեան ձգտումը համամարդկային արժէք է հանդիսանում աշխարհի բոլոր ծայրերում:

Այս կապակցութեամբ, թոյլ տուէք յիշեցնել աշխարհի մէկ այլ տարածաշրջանում՝ Լեռնային Ղարաբաղում ապրող հայերի մասին, ոքեր խիզախօրէն պայքարում են Ադրբեջանի դէմ, որը փորձում է բռնի կերպով ճնշել մեզ բարեկամ այս ժողովրդի՝ հարազատ հողում, սեփական Հանրապետութեան մէջ ազատ ապրելու կամքը: Այսօր՝ անպատիժ մնացած Հայոց ցեղասպանութիւնից 95 տարի յետոյ, աւելի քան երբեւէ ես վերահաստատում եմ հայերի ինքնորոշման անքակտելի իրաւունքը,- մասնաւորապէս, նշում է Ֆրանսիացի պատգամաւորի յօդուածում:

Նա կոչ է արել իր երկրին եւ ֆրանսիական դիւանագիտութեանը յարգել «տեւական խաղաղութեան ձգտող եւ դրան հասնելու համար հերոսաբար պայքարող ժողովուրդներին, յայտնում է ԼՂՀ ԱԳՆ մամուլի ծառայութիւնը:



Յեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ Հայաստանը պէտք է պաշտօնապէս բարձրացնի ստեղծուած Հայկական հարցը

2011-04-01

Աւելին, ԽՍՀՄ լուծարումից ի վեր գլխաւորելով յանցակից ուժերին՝ շրջափակելով մեկուսացնում է Հայաստանի, Արցախի Հանրապետութիւնները եւ շարունակում է այս պետութիւնների բնիկ բնակչութեան դէմ ծրագրած յանցաւոր գործողութիւնները: Այս մասին ասում է «ազատ Հայքէ ՀԿ յայտարարութեան մէջ:

Յայտարարութեան մէջ ասում է նաեւ, որ այս իրողութիւններից ելնելով, ցեղասպանութիւնը ճանաչած ու դատապարտած երկրներին, պետութիւններին, հոգեւոր ու քաղաքական կառոյցներին երախտագիտութիւն յայտնելով,

Հայաստանի քաղաքական վերնախաւին յիշեցնում ենք, որ մինչեւ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցը՝ 2015 թ., մնացել է 1485 օրէ:

Ոստի հիմք ընդունելով, որ ի հակակշիռ Թուրքիայի ժխտողական կեցուածքի, Հայոց ցեղասպանութիւնը ճանաչած ու դատապարտած պետութիւնները եզրագծել են իրաւական եւ քաղաքական փաստաթղթերի ամբողջական մի փաթեթ, որը ՀՀ իշխանութիւնները պարտաւոր են ընդհանրացնել եւ բարձրացնել միջազգային ատեաններում, «ագատ Հայքը կոչ է անում. Հայոց Մեծ ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ օրերի հետհաշուարկ սկսել, ԱԺ օրակարգ մտցնել Հայոց ցեղասպանութեան հետեւանքների վերացմանն ուղղուած հայեցակարգի ընդունումը : Առաջարկում է նաեւ միջպետական խորհրդակցութիւններ սկսել Հայոց ցեղասպանութիւնը ճանաչած երկրների իշխանութիւնների հետ, մինչեւ սոյն թուականի օգոստոսի 10– ը միջազգային ատեաններում պաշտօնապէս բարձրացնել սատեցուած Հայկական հարցը:



Բակոյ Սահակեանը կարելորել է Արցախի

Երիտասարդների կապը Հայաստանի եւ Սփյուռքի հետ

2011-03-31

Հանդիպման ընթացքում քննարկուել է երիտասարդական կազմակերպությունների գործունեութանը եւ երիտասարդների կեանքին վերաբերող հարցերի լայն շրջանակ, հաղորդում է Արցախի նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխավոր վարչութիւնը:

Երկրի ղեկավարն ընդգծել է, որ երիտասարդների հետ պարբերական հանդիպումները պայմանավորում են հասարակութեան եւ պետութեան զարգացման գործում նրանց դերակատարութեան շարունակական բարձրացման մէջ շահագրգռուածութեամբ: Այս համատեքստում Նախագահ Սահակեանը նշել է, որ երիտասարդական կազմակերպությունների աշխատանքներին պետք է նոր որակ հաղորդել, աւելի խորացնել ու ընդլայնել փոխգործակցութիւնը պետական եւ հասարակական հատուածների, Հայաստանի եւ Սփյուռքի երիտասարդական կազմակերպությունների հետ:

Հանդիպմանը ներկայ էին մշակոյթի եւ երիտասարդութեան հարցերի նախարար Նարինէ Աղաբալեանը, պաշտօնատար այլ անձինք:



Սինգապուրի ԱԳՆ դեկավար Ջորջ Յէոն պատրաստ

հնարաւորինս աջակցելու հայ- սինգապուրեան կապերի ակտիւացմանը

2011-03-30

Այցի ընթացքում դեսպան Սարգսեանը հանդիպում է ունեցել Սինգապուրի արտաքին գործերի նախարար ջորջ Յէոի հետ: Քննարկել են երկկողմ յարաբերութիւններին, տարբեր մակարդակներում պաշտօնական փոխայցելութիւններին, գործարար շրջանակների միջեւ համագործակցութեան հաստատմանն ու յետագայ զարգացմանը նուիրուած հարցեր:

Հաւանութիւն տալով հայկական կողմի առաջարկներին՝ նախարար Ջորջ Յէոն իր պատրաստակամութիւնն է յայտնել հնարաւորինս աջակցելու հայ-սինգապուրեան կապերի ակտիւացման գործընթացին: Միաժամանակ նա

բարձր է գնահատել հայ համայնքի դերը Մինգապուրի տնտեսական, հասարակական եւ մշակութային կեանքում:

Դեսպանի հրաւերով Մինգապուրի արտաքին գործերի նախարարը մարտի 27-ին ներկայ է գտնուել Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում մատուցուած սուրբ պատարագին եւ մասնակցել է դրան յաջորդած միջոցառմանը, ուր հանդես է եկել ողջոյնի խօսքով:

Եկեղեցու օժման 175 ամեակին նուիրուած միջոցառումներին մասնակցել են ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը, Սբ. Էջմիածնի յատուկ ներկայացուցիչ Ռսկան արքեպիսկոպոս Կալպակեանը, Աւստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմի առաջնորդ Ադան արքեպիսկոպոս Պալիոզեանը: Ներկայ էին աշխարհի 14 երկրներից ժամանած աւելի քան 160 հայեր, ինչպէս նաեւ Մինգապուրում գործող այլ եկեղեցիների հոգեւորականներ, երկրի հասարակայնութեան ներկայացուցիչներ, հաղորդում է ՀՀ ԱԳՆ մամլոյ ծառայութիւնը:



Սեդրակ Աճեմեան.

Ղարաբաղեան

պատերազմի վերսկսումն անկանխատեսելի հետևանքներ կը քերի տարածաշրջանի համար

2011-03-28

Խորհրդածողովին մասնակցում էին Բազմաթիւ հեղինակաւոր քաղաքական եւ հասարակական գործիչներ Ֆրանսիայից, Հայաստանից, Ամն-ից, Գերմանիայից եւ այլն:

Իբրեւ հիմնական զեկուցող հանդէս եկաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Կեդրոնական վարչութեան անդամ Վահան Շիրխանեանը, ով անդրադարձաւ Հարաւային Կովկասի ռազմականացմանը, հայ-ադրբեջանական եւ հայ-թուրքական յարաբերութիւններին, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին, ֆրանսիացի խորհրդարանականների ուշադրութիւնը հրաւիրեց Բաքուի կողմից պարբերաբար հնչող պատերազմի մասին սպառնալիքներին, ընդգծեց այն ապակառուցողական եւ վտանգաւոր դիրքորոշումը, որ որդեգրել է Թուրքիան Հայաստանի հետ յարաբերութիւններում եւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրում: Խորհրդածողովի փակման խօսքով հանդէս եկաւ

ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետ
Սեդրակ Աճեմեանը:

«Խաղաղութիւնը, անվտանգութիւնն ու
կայունութիւնը Հարաւային Կովկասում լոկ բառեր
չեն, այն գերակայ խնդիր է ոչ միայն
տարածաշրջանի, այլեւ ողջ միջազգային
հանրութեան համարէ,- նշել է Աճեմեանը: Իր
խօսքում Աճեմեանն անդրադարձել է Թուրքիայի
հակահայ քաղաքականութեանը, որը ձգտում է
մտնել Եւրամիութիւն, սակայն փակ է պահում
Հայաստանի հետ սահմանը, փորձելով երկիրը
պահել շրջափակման մէջ` այս կերպ մշտական
վտանգ ներկայացնելով տարածաշրջանի համար:
«Թուրքիան շարունակում է ժխտել անցեալ դարի
մեծագոյն ոճիրը` Հայոց ցեղասպանութիւնը, որին
գոհ գնացին մէկ եւ կէս միլիոն մեր
հայրենակիցները,- ընդգծել է ատենապետը:

Խօսելով Ադրբեջանի մասին` նա նշել է, որ անցած
դարի 90-ական թ-ից նա ռազմական ագրեսիայ
սկսեց միջազգային իրաւունքի բոլոր տարրերին
համապատասխան ինքնորոշուած Լեռնային
Ղարաբաղի ժողովրդի դէմ, եւ պարտուեց իր
սանձազերծած պատերազմում: «այժմ էլ, երբ

Ղարաբաղում մեծացել է նոր՝ անկախ սերունդ,
Ադրբեջանը մշտապես սպառնում է պատերազմով,
որի սկսումը անկանխատեսելի հետեւանքներ կը
բերի ոչ միայն իր՝ այլև ողջ տարածաշրջանի
համարէ,- յայտարարել է ԱՃեմեանը:

ՀՀ սփյուռքի նախարարութիւ ն



«Ցավի, յիշողութեան եւ պայքարի կոթողներ»

2011-04-04

Այն աշխարհում Հայոց
Ցեղասպանութեան գոհերի
յիշատակի առիթով կառուցուած

յուշարձանների համահաւաք վաւերագիր
մատեան է, ուր իւրաքանչիւր կոթող փաստում է
Օսմանեան Թուրքիայի կողմից մարդկութեան ու
քաղաքակրթութեան դէմ ոճրագործութեան
դատապարտումը: «նախաձեռնելով
պատկերագրքի ստեղծումը՝ ՀՀ սփյուռքի
նախարարութիւնը նպատակ է ունեցել մէկ գրքի
մէջ ամփոփել Հայաստանի Հանրապետութիւնում,
Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնում եւ

արտերկրում գտնուող յուշակոթողները՝ որպես
չխամրող յիշողութիւն ցաւի եւ ողբերգութեան,
պետութիւնների կողմից Հայոց Յեղասպանութեան
դատապարտման եւ նոր ցեղասպանութիւնների
կանխարգելման անհրաժեշտութիւնէ,- իր խօսքում
գրում է ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ
Յակոբեանը:

XIX դարի վերջը եւ XX դարի սկիզբը հայ
ժողովրդի համար ճակատագրական
ժամանակաշրջան էր: Օսմանեան կայսրութիւնը
ծրագրեց եւ իրագործեց հայոց Մեծ Եղեռնը:
Տեղահանուեցին, աքսորուեցին, կրօնափոխ
արուեցին ու սրի զոհեր դարձան հարիւր-
հազարաւոր հայեր: Այս իրողութիւնը ժամանակին
դատապարտեցին օտարագգի
առաջադէմ հասարակական-քաղաքական
գործիչներ ու մտաւորականներ Հենրի
Մորգենթաւուն, Արմին Վագները, Աննա Հեդիգ
Բեօլը, Ֆրանց Վերֆելը, Եօհաննէս Լեփսիուսը,
Անատոլ Ֆրանսը, Բենեդիկտոս XV-ը, Ֆրիտեֆ
Նանսենը եւ այլք:

Աշխարհի տարբեր ծագերում /Արգենտինա,
Բրազիլիա, ԱՄՆ, Կանադա, Աւստրալիա, Իրան,

Միրիա, Լիբանան, Հնդկաստան, Եգիպտոս,
Աւստրիա, Բելգիա, Բուլղարիայ, Գերմանիա,
Ֆրանսիայ, ՌԴ, ՀՀ եւ այլուր/ ապրող հայի
յիշողութիւնը, որ նաեւ ճակատագիր է, ստիպում է
ունենալ հայ մնալու գիտակցութիւնը: Ժողովածուն
բացում է Երեւանի Ծիծեռնակաբերդի
բարձունքում կառուցուած յուշահամալիրի ազդու
պատկերով:

Պատկերագրքում գետեղուած իւրաքանչիւր
խաչքարի, իւրաքանչիւր յուշարձանի
մէջ ծածկագրուած լռութիւն կայ, որ ներըմբռնելի
է եղելութեան ժամանակի ռեզոնանսում, քանզի
իւրաքանչիւր հայի հոգում ողջ հայութիւն է
ապրում, Սկզբի ու Վերջի միջեւ՝ շարունակական,
որ Ընթացքն է՝ յարատեւ, առանց դադար, ինչպէս
Դանիէլ Վարուժանն է ասում՝ «...արիւնից պիտի
ծնուին կակաչներ, պիտի կանգնին գերեզմանին
մէջ իրենց...»:

Ճակատագրի ու պատմութեան ներքին դրաման
ամբողջանում է գիրքը թերթելիս, աշխարհի
ընկալումը երեւում է միջնորդուած
բանականութեամբ չտրուող կոթողների
չյաղթահարուող պատկերներով, որոնք նոյն

աշխարհը դարձնում են տեսիլք,
վերակենդանացնում նզովեալ ճանապարհների,
աղէտի ու աքսորի անվերջ զարհուրանքը, որ
մահուան յիշողութեան յաճախանքն ունի:

Աշխարհը եղել է ու կայ, ու աշխարհը մեծ է, ու
անյայտի հակադրուած որոնումը պարփակում է
անիծեալ ժամանակի ու մի ողջ
սերնդի գոյաբանական ողբերգութիւնը:

«ցաւի, յիշողութեան եւ պայքարի կ'որոններէ
պատկերագիրքը եւս մի յուշարձան է, որ իրական
է, եւ թւում է ` անիրական, ինչ-որ մի ժամանակ
տեսնուած տեսիլք, յուշ-ապրում, զարթուն
ողբերգութիւն: Ու ջղերի լարումից կծկուած բոցի
մի տեսակը` սպիտակ լոյսը, անընդհատ յիշեցնում
է անապատի շիկացող տեսարանները, որոնցից
վեր դատարկ երկինքը բերնեբերան լցւում է հողի
լռութեամբ, համաշխարհի աշխարհագրութիւնը
նոյնանում է հայի հոգու աշխարհագրութեանը:
Ծածկագրուած այս լռութեամբ էլ վերձանում են
մարդ-գազանի հնարաւոր բոլոր
կարողութիւնները, որոնցից փրկուածները յետոյ
դարձել են օտար ափերում դեգերող միայնակ
աստղեր ու ձեւաւորել հայկական ՍՓԻԻՌՔԸ:



ՀՀ սփյուռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը հանդիպեց

աւստրալահայ գործարարների հետ

2011-04-03

Հանդիպումը կազմակերպել էր «հայկորպե սեփականատիրության զարգացման ընկերությունը, որի գործադիր տնօրեն Մայքլ Աբոլաքեանը հիւրըկալեց նախարար Հրանոյշ Յակոբեանին:

Աւստրալահայ գործարարներից բացի ՀՀ սփյուռքի նախարարի հետ հանդիպմանը ներկայ էին նաեւ հայաշատ Ռայդ քաղաքի քաղաքապետ Արթին Էքմեքճեանը՝ տիկնոջ հետ, Ռայդի քաղաքային խորհրդի անդամ Սարգիս Յեդելեանը, աւստրալահայ առեւտրատնտեսական պալատի նախագահ Ռիտա Լեփեճեանը, «փլանետ Արքե («Planet Ark») եւ «դու Սամֆինգե («Do Something») հասարակական կազմակերպությունների հիմնադիր եւ հայ ժողովրդի բարեկամ Ջոն Դին: Ողջունելով ներկաներին՝ ՀՀ սփյուռքի նախարար Հ.Յակոբեանը բարձր գնահատեց աւստրալահայ գործարարների դերը Աւստրալիա-հայաստան տնտեսական կապերի զարգացման գործում:

Նախարարն ընդգծեց, որ ՀՀ կառավարությունը Հայաստանի տնտեսական զարգացումը համարում է պետության կայունության երաշխիք: «մենք ստեղծել ենք բոլոր հնարաւորութիւնները՝ դիրացնելու օտարերկրեայ դրամագլխի ներդրումները Հայաստանում եւ հրաւիրում ենք սփիւռքահայ գործարարներին իրենց ներդրումներով ճանապարհ հարթել եւ վստահութիւն ներշնչել օտարերկրեայ գործարարներին, - նշեց տիկին Հ.Յակոբեանը:

Հանդիպման աւարտին նախարարը խորհուրդ տուեց ներկաներին այցելել Հայաստան եւ տեղում քննարկել ներդրումների հնարաւորութիւնները:

«այսօր առիթ ունեցանք հանդիպելու Հայաստանի կառավարութեան բարձրաստիճան եւ ազդեցիկ նախարարներից մէկին: Մեր անկեղծ քննարկումներից յետոյ աւելի շատ դրդապատճառներ ունենք Հայաստանում ներդրումներ կ'ատարելու, - նշեց երիտասարդ գործարար եւ «հայկորպէ ընկերութեան տնօերէն Ս.Աբոլաքեանը:



**Աւստրալիայի
խորհրդարանականների
հետ հանդիպմանը ՀՀ
սփյուռքի նախարար
Հրանոյշ Յակոբեանը քարձրացրել է
Հայոց Ցեղասպանութեան ճանաչման
եւ Լեռնային Ղարաբաղի
անկախութեան հարցերը**

2011-04-02

Խորհրդարանականներ Ջոյ Հոկիի, Փոլ Ֆլեչերի, Գլադիս Բերեջիկլեանի եւ Ջոնաթան Օ Դեյլի հետ Աւստրալիայի Հայ Դատի յանձնախմբի կողմից կազմակերպուած հանդիպումները ՀՀ սփյուռքի նախարար Հրանոյշ Յակոբեանին հնարաւորութիւն ընձեռեցին ներկայացնելու Հայոց Ցեղասպանութեան եւ Լեռնային Ղարաբաղի անկախութեան վերաբերեալ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան դիրքորոշումները:

Ի պատասխան խորհրդարանականների հարցերի, Հ.Յակոբեանը նաեւ ներկայացրեց ՀՀ սփյուռքի նախարարութեան գործունէութիւնն ու նպատակները:

«Հայաստանի Հանրապետության կառավարության արտաքին քաղաքականության ամենակարևոր խնդիրներն են Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի՝ որպես անկախ պետության ճանաչման քարոզչությունը», - ասել է նախարար Հրանոյշ Յակոբեանը: Ծաւալուեցին լայն քննարկումներ՝ Հայոց Ցեղասպանության փաստի եւ աշխարհով մէկ սփռուած հայ ժողովրդի վերաբերեալ:

Նախարարին ուղեկցող Աւստրալիայի Հայ դատի յանձնախմբի գործադիր տնօրէն Վարանդ Մկրտիչեանն ընդգծեց Աւստրալիայի խորհրդարանականների հետ նախարարի հանդիպումների կարեւորութիւնը:

«Քննարկումների ընթացքում նախարարը եւ Աւստրալիայի Հայ դատի յանձնախմբի ներկայացուցիչներն ընդգծեցին, որ Հայաստանի

Հանրապետութիւնը եւ Աւստրալիայի հայկական
համայնքը միակարծիք են Հայոց
ցեղասպանութեան ճանաչման եւ Լեռնային
Ղարաբաղի անկախութեան հարցերում:
Նախարար Հ.Յակոբեանի խօսքերով այսօր նոր եւ
աւելի խոր հնչեղութիւն ստացան Աւստրալիայի
Հայ դատի յանձնախմբի եւ Աւստրալիայի
խորհրդարանականների կողմից յաճախ
բարձրացուած հարցերը», - ասել է Վարանդ
Մկրտիչեանը:

Նախարար Հ.Յակոբեանին ընդունած
խորհրդարանականները միշտ էլ համագործակցել
են Աւստրալիայի Հայ դատի յանձնախմբի հետ`
հայկական համայնքին յուզող հարցերի շուրջ:
Տարիներ շարունակ խորհրդարանական Ջ.Հոկին
կողմ է եղել Դաշնային խորհրդարանի կողմից
Հայոց ցեղասպանութեան ճանաչմանը, իսկ
Փ.Ֆլեչերը եւ Ջ.Օ Դեան իրենց ելոյթներում միշտ
կողմ են եղել Լեռնային Ղարաբաղի
անկախութեանը: Վերջերս ընտրուած տիկին
Բերեջիկլեանը եղել է Աւստրալիայի Հայ դատի
յանձնախմբի վարչութեան անդամ:

Նախարար Հ.Յակոբեանի Աւստրալիա այցի նպատակն էր առաւել խրախուսել Հայաստանի Հանրապետութեան եւ Աւստրալիայի հայկական համայնքի միջեւ յարաբերութիւնները: Այս շաբաթ տիկին Հ.Յակոբեանն այցելեց համայնքային կազմակերպութիւններ, այդ թւում՝ Վիլոուբիի Հայկական մշակութային կենտրոն եւ Ինգլսայդի Համազգայինի «Գօլստրն» վարժարան:

Հ.Յակոբեանը ներկայ է գտնուել նաեւ համայնքի կողմից կազմակերպուած բազմաթիւ հանդիպումների, այդ թւում նաեւ աւելի քան 500 մարդկանց մասնակցութեամբ մարտի 29-ին Աւստրալիայի Հայկական կենտրոնում տեղի ունեցած շնորհանդէսին:

**Աւստրալիայի հայկական համայնքի
հասարակայնութեան հետ կապերի բարձրագոյն
յանձնաժողով**



ԲԱԹՈՒՄԻ ՀԱՅ

ՀԱՄԱՅՆՔՆ ՌԻ ՆՐԱ

ԽՆԴԻՐՆԵՐԸ

2011-04-02

Նա իր հետ բերել էր ՄՆ նախարար Հ. Յակոբեանին ուղղուած նամակներ հայ համայնքի ղեկավար Գրիգոր Վարդանեանի եւ Բաթումի «սուրբ Փրկիչէ եկեղեցու հոգեւոր հովիւ տէր Արարատ Գումբալեանի կողմից: Երկու նամակներում էլ շնորհակալութիւն էր յայտնում տիկին Հրանոյշ Յակոբեանին նրա գործադրած ջանքերի համար, որի շնորհիւ այժմ Հայաստան-սփիւռք փոխյարաբերութիւնը դառնում է աւելի սերտ եւ կազմակերպուած, իսկ իրենք անչափ ոգեւորուած՝ կրթական, մշակութային եւ սպորտային բնագաւառներում նախարարութեան կողմից կատարած ծանրակշիռ աշխատանքների շնորհիւ: Այսօր Բաթումի հայ համայնքը փորձում է հնարաւորինս մասնակցել Սփիւռքի Նախարարութեան ծրագրերին, առաւելեւս, որ ամէն օր «արի Տունէ ծրագրին մասնակցած երիտասարդների շուրթերին են Հայաստանից ստացուած տպաւորութիւնները:

Զրոյցի ժամանակ պարոն Յովհաննիսեանը ներկայացրեց Բաթումի հայ համայնքի կեանքը, խնդիրները: Նա ցաւով նշեց, որ Աջարիայում չեն կարողանում դիմագրաւել իրենց առջեւ ծառացած դժուարութիւններին: Հայկական դպրոցը կորցրել է

իր երբեմնի հզօրութիւնը: Հայոց լեզուն,
պատմութիւնը պահպանելու գործը մեծ մասամբ
դրուած է «սուրբ Փրկիչ եկեղեցում գործող Մեսրոպ
Մաշտոցի անուան կիրակնօրեայ դպրոցի ուսերին,
որն ունի երկու առաջին եւ մէկ երկրորդ
դասարան: Այս տարի բացուել է եւս մէկ
կիրակնօրեայ դպրոց Քոբուլեթի
քաղաքում: Նիւթական պայմանների սղութեան
պատճառով դժուար է հասցնել ուսուցիչների
վճարը, իսկ դասագրքերն ու համապատասխան
աշխատանքային տետրերը չեն բաւականացնում:
Կայ եւս մէկ ցաւալի հանգամանք՝ փակուել է
Աջարիայի հայ համայնքի «աղբիւրէ
պաշտօնաթերթը:

Պարոն Յովհաննիսեանի հետ կազմուեց
անհրաժեշտ դասգրքերի յայտը, որը կը
ներկայացուի ՀՀ ԿԳՆ , քննարկուեց «աղբիւրէ
թերթին ֆինանսապէս աջակցելու
հնարաւորութեան հարցը, որոշուեց աւելի ակտիւ
համագործակցել եւ ամրապնդել կապերը
նախարարութեան հետ՝ ասել է թէ Հայրենիքի
հետ:

Հասմիկ Եղիազարյան



**ՀՀ սփյուռքի
նախարարությունում
անցկացուեց
Եւրամիութեան
Թուինինգ եւ Թայքս Ժրագրերին
նուիրուած սեմինար**

2011-03-30

ՀՀ էկոնոմիկայի նախարարութեան
Եւրամիութեան հետ յարաբերութիւնների
Եւրամիութեան ծրագրերի կառավարման բաժնի
աշխատակիցներ Կ.Դանիէլեանը, Ա.Յովսէփեանը
եւ Դ.Շինդեանը ՀՀ սփյուռքի նախարարութեան
աշխատակիցներին ներկայացրեցին Թուինինգի
սկզբունքները, հիմնական դերակատարներին,
ծրագրի ղեկավարներին, Թուինինգի շրջափուլերը,
Թուինինգ առաջարկի գնահատման
չափորոշիչները, Թայքս Ժրագրի խնդիրները,
շահառուներին, Թայքս օժանդակութեան
տեսակները եւ այլն:

Սեմինարին ներկայ էր նաեւ ՍՍՏՏՕ (SATTO-
Support to Armenian TWINNING and TAIEX
Operations) թիմի ղեկավար Պատրիկ Մուսիէ
Լոմպրեն:



Հրանոյշ Յակոբեանը մասնակցել է Մինգապուրի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայ Առաքելական եկեղեցու 175-ամեակի միջոցառումներին

2011-03-29

Մարտի 25-28-ն աշխատանքային այցով Մինգապուրում գտնուող ՀՀ սփյուռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը մասնակցեց Մինգապուրում առաջին քրիստոնեական կառույցի՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայ Առաքելական եկեղեցու 175-ամեակին նուիրուած միջոցառումներին:

Մարտի 26-ի առաւօտեան տիկին Հ.Յակոբեանն այցելեց Մինգապուրում հայկական համայնքի պատմութեանն առնչուող տեսարժան վայրեր: Մինգապուրում հայկական համայնքի պատմութիւնը, եկեղեցուց բացի, ներառում է Հայկական փողոցը, Մինգապուրի պատմական ամենանշանաւոր կառույցներից մէկը՝ հանրայայտ Ռաֆլզ Հոթել հիւրանոցը եւ այն հիմնադրող Սարգիս (Սարգսեան) եղբայրների անուամբ կոչուող փողոցը, անգլերէնով հրատարակուող

Մթերյթս Թայնգ օրաթերթը (հիմնադրուել է 1845թ. Խաչիկ Մովսէսի կողմից), Մինգապուրի ազգային ծաղիկը (Միս Վանդա Ջոաքիմ, որը կրում է այդ հիբրիդ-խուրձը ստեղծող հայազգի բուսաբան Աշխէն Յովակիմեանի կամ Ազնէս Ջոաքիմի անունը), ինչպէս նաեւ Գալիստան եւ Սենթ Մարթին փողոցները:

Նոյն օրը երեկոյեան ՀՀ Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը մասնակցեց Ռաֆլզ հիւրանոցում կայացած ընդունելութեանը, որը եզրափակուեց հայ երաժիշտների կատարմամբ եւրոպական եւ հայ դասական երաժշտութեան համերգով: Ներկայ էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Ոսկան Արքեպիսկոպոս Կալպակեանը, Հայ Առաքելական եկեղեցու Աւստրալիայի թեմի առաջնորդ Ադան Արքեպիսկոպոս Պալիոզեանը, Մինգապուրի Ազգային պատմամշակութային արժէքների պահպանման խորհրդի նախագահ Թոմի Քոհր, Մինգապուրում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Արմէն Սարգսեանը, Մինգապուրի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայ Առաքելական եկեղեցու հոգաբարձուների խորհրդի անդամներ եւ այլք:

Ընդհանուր առմամբ միջոցառմանը ներկայ էր ավելի քան 160 հայ` աշխարհի 14 երկրից, այդ թւում` շուրջ 40 ներկայացուցիչ` Սինգապուրի հայ համայնքից: Երեկոն արձանագրեց Սինգապուրում հայերի թերեւս ամենամարդաշատ հաւաքը:

Յաջորդ օրը` մարտի 27-ին ՀՀ սփյուռքի նախարարը մասնակցեց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայ Առաքելական եկեղեցում մատուցուած պատարագին, որին, ի թիւս այլ մասնակիցների, ներկայ էր նաեւ Սինգապուրի արտաքին գործերի նախարար Ջորջ Եօն:

Պատարագից յետոյ հանդիսաւոր արարողութեան մասնակիցներին ողջոյնի խօսքով դիմեցին ՀՀ սփյուռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը, Սինգապուրում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Արմէն Սարգսեանը, ինչպէս նաեւ Սինգապուրի արտաքին գործերի նախարար Ջորջ Եօն:

Վերջինս, մասնաւորապէս, ընդգծեց, որ «հայերի փոքր համայնքը երկրի թագի զարդերից է»:



«Հայերի փոքր համայնքը երկրի թագի զարդերից է»

2011-03-29

Մարտի 26-ի առաւօտեան տիկին Հ.Յակոբեանն այցելեց Սինգապուրում հայկական

համայնքի պատմությանն առնչուող տեսարժան վայրեր: Մինգապուրում հայկական համայնքի պատմութիւնը, եկեղեցուց բացի, ներառում է Հայկական փողոցը, Մինգապուրի պատմական ամենանշանաւոր կառոյցներից մէկը՝ հանրայայտ Ռաֆլզ Հոթել հիւրանոցը եւ այն հիմնադրող Սարգիս (Սարգսեան) եղբայրների անուամբ կոչուող փողոցը, անգլերէնով հրատարակուող Սթրէյթս Թայմզ օրաթերթը (հիմնադրուել է 1845թ. Խաչիկ Մովսէսի կողմից), Մինգապուրի ազգային ծաղիկը (Միս Վանդա Ջոաքիմ, որը կրում է այդ հիբրիդ-խուրճը ստեղծող հայազգի բուսաբան Աշխէն Յովակիմեանի կամ Ազնէս Ջոաքիմի անունը), ինչպէս նաեւ Գալիստան եւ Սենթ Մարթին փողոցները:

Նոյն օրը երեկոյեան ՀՀ Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը մասնակցեց Ռաֆլզ հիւրանոցում կայացած ընդունելութեանը, որը եզրափակուեց հայ երաժիշտների կատարմամբ եւրոպական եւ հայ դասական երաժշտութեան համերգով: Ներկայ էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Ոսկան Արքեպիսկոպոս Կալպակեանը, Հայ Առաքելական եկեղեցու Աւստրալիայի թեմի

առաջնորդ Ադան Արքեպիսկոպոս Պալիոզեանը,
Սինգապուրի Ազգային պատմամշակութային
արժէքների պահպանման խորհրդի նախագահ
Թոմի Քոհը, Սինգապուրում ՀՀ արտակարգ եւ
լիազօր դեսպան Արմէն
Սարգսեանը, Սինգապուրի Սուրբ Գրիգոր
Լուսաւորիչ Հայ Առաքելական եկեղեցու
հոգաբարձուների խորհրդի անդամներ եւ այլք:
Ընդհանուր առմամբ միջոցառմանը ներկայ էր
աւելի քան 160 հայ` աշխարհի 14 երկրից, այդ
թւում` շուրջ 40 ներկայացուցիչ` Սինգապուրի հայ
համայնքից: Երեկոն արձանագրեց Սինգապուրում
հայերի թերեւս ամենամարդաշատ հաւաքը:

Յաջորդ օրը` մարտի 27-ին ՀՀ սփյուռքի
նախարարը մասնակցեց Սուրբ Գրիգոր
Լուսաւորիչ Հայ Առաքելական եկեղեցում
մատուցուած պատարագին, որին, ի թիւս այլ
մասնակիցների, ներկայ էր նաեւ Սինգապուրի
արտաքին գործերի նախարար Ջորջ Եօն:
Պատարագից յետոյ հանդիսաւոր արարողութեան
մասնակիցներին ողջոյնի խօսքով դիմեցին ՀՀ
սփյուռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը,
Սինգապուրում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան
Արմէն Սարգսեանը, ինչպէս նաեւ Սինգապուրի

արտաքին գործերի նախարար Ջորջ Եօն:
Վերջինս, մասնաւորապէս, ընդգծեց, որ «Հայերի
փոքր համայնքը երկրի թագի զարդերից է»:



ՀՀ սփիւռքի նախարար
Հրանոյշ Յակոբեանը
մասնակցեց
Սինգապուրի Սուրբ

Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու եւ հայ
համայնքի հիմնադրման 175-ամեակին
նուիրուած տօնակատարութիւններին

2011-03-28

Տօնական միջոցառումներին մասնակցելու
նպատակով Սինգապուր էին ժամանել աւելի քան
160 հայ` 14 երկրից:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին Սինգապուրի
ամենահին քրիստոնէական եկեղեցին է, եւ 1973թ.
յուշարձանների պահպանութեան Սինգապուրի
ազգային խորհրդի կողմից պաշտօնապէս
ճանաչուել է որպէս ազգային կոթող:

ՀՀ սփիւռքի նախարար Հ.Յակոբեանը մասնակցեց
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում
մատուցուած պատարագին եւ հանդիսաւոր

ընդունելութեանը: Տիկին Հ.Յակոբեանը շնորհաւորելով բոլոր ներկաներին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու հիմնադրման 175-ամեակի եւ Սինգապուրի հայ համայնքի կազմաւորման կապակցութեամբ՝ մաղթեց մեծամեծ նուաճումներ եւ համահայկական ձեռնարկներին ակտիւօրէն մասնակցելու, Հայրենիքի հետ կապերն առաւել ամրապնդելու վճռականութիւն:

Տօնական միջոցառումներին ներկայ էր նաեւ Սինգապուրի արտաքին գործերի նախարարը, ով շնորհաւորելով համայնքի եւ եկեղեցու հիմնադրման առթիւ՝ նշեց, որ հայկական եկեղեցին եւ համայնքը կարելոր տեղ է զբաղեցնում սինգապուրեան ժառանգութեան մէջ:

Սինգապուրում շուրջ 80 հայ է ապրում: Չնայած համայնքը փոքրաթիւ է, սակայն վերջին հինգ տարուայ ընթացքում համայնքի անդամների թիւը կրկնապատկուել է, բացուել է հայկական կիրակնօրեայ դպրոց:

Իր ելոյթում խոստանալով աջակցել հայկական կիրակնօրեայ դպրոցի կայացմանը՝ տիկին Հ.Յակոբեանը Սինգապուրի հայ համայնքին

յորդորեց դառնալ ՀՀ սփիւռքի նախարարութեան կողմից իրականացուող համահայկական եւ տարածաշրջանային ծրագրերի ակտիւ եւ շահագրգիռ մասնակիցը, ընդգրկուել Հայրենիք-Սփիւռք գործակցութեան բոլոր բնագաւառներում:

Սփիւռք



Կալկաթայում նշուեց Հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման

190-ամեակը

2011-04-04

Բացման խօսքով հանդէս եկաւ ճեմարանի կրթական տնօրէնը: Այնուհետեւ Մարդասիրականի պարախումբը ներկայացրեց մի գեղեցիկ հնդկական պար, որին յաջորդեց կրթօջախի երգչախմբի ելոյթը: Ապա 2010-2011 ուսումնական տարուայ շրջանաւարտներին յանձնուեց ճեմարանի անունը կրող ժամացոյցներ, իսկ բարձր առաջադիմութիւն ունեցող աշակերտները պարգեւատրուեցին գովասանագրերով եւ ստացան խրախուսական նուէրներ:

Հանդիսութեան ընթացքում ցուցադրուեց

Հնդկահայքի երեւելիների եւ հայ-հնդկական
յարաբերութիւնների մասին պատմող տեսանիւթ:
Իսկ հանդիսութեան բարձրակէտն էր Ն. Ս. Օ. Տ. Տ.
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի
օրհնութեամբ Կալկաթայում լոյս տեսած
«հնդկահայքէ երկլեզու (հայերեն-անգլերէն)
երկրորդ տարեգիրքը, որը ներկայացրեց գրքի
հիմնադիր-հրատա-րակիչ, հնդկահայոց հոգեւոր
հովիւ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառա-
վարիչ Հայր Խորէն Յովհաննիսեանը:
«հնդկահայքէ 2010-ում խտացել են հնդկահայոց
հոգեւոր հովուութեան եւ Հնդկաստանում «կտոր
մը Հայաստանիէ՝ Հայոց մարդասիրական
ճեմարանի անցուդարձը, մեր շնորհալի
ուսանողների ուսումնական ու մարզական
նուաճումները: Տարեգրքում տեղ են գտել
հնդկահայ համայնքի հարիւրամեակների
պատմութիւնը լուսաբանող յօդուածներ, ինչպէս
նաեւ աշխարհի տարբեր ծագերից անդրանիկ
հրատարակութիւնը գնահատող եւ արժեւորող
նամակներ, որոնք պարտաւորեցնող էին եւ իրթան
«հնդկահայքէ 2010-ը կեանքի կոչելու գործում:
(Հայր Խորէն)
Մշակութային մասի աւարտին ներկաները
հիւրասիրուեցին յոբելեանական տորթով:

Ձեռնարկին ներկայ էին Ճեմարանի աշակերտութիւնը, ուսուցիչները, պաշտօնէութիւնը, Սուրբ Նազարէթ Մայր եկեղեցու վարչութեան անդամները, հա-մայնքի ներկայացուցիչներ եւ հիւրեր:

Հայոց մարդասիրական Ճեմարանը հիմնադրուել է 1821 թուականի ապրիլի 2-ին` Աստուածատուր Մուրադիանեանի եւ Մնացական Վարդանեանի բարերարութեամբ: Կրթօջախը Կ'ալկաթայի երկրորդ ամենահին դպրոցն է:

Հանդիսութիւնը յարգանքի տուրք էր դպրոցի հիմնադիրների պայծառ յիշատակին:



Մարիայ Մեհրանեանը
նշանակուել է
Կալիֆորնիայի

Ցեղասպանութեան գծով միջազգային յանձնաժողովի անդամ

2011-04-02

Կոմիտէի նպատակն է միաւորել պատմաբանների ու տարբեր մասնագէտների Հայոց ցեղասպանութեան, Հոլոքոսթի, Կ'ամբոջայի ու Դարֆուրի ցեղասպանութիւնների մասին փաստերի ուսումնասիրութեան համար:

Մարիայ Մեիրանեանը Կալիֆորնիայի հայ համայնքի առանցքային դեմքերից է, որը լուրջ հմտութիւններ ունի ու ազդեցութեան ոլորտ: Ինչպէս նշում է Asbarez.com-ը, Մեիրանեանը մեծ աւանդ կ'ունենայ նորաստեղծ յանձնաժողովի գործունէութեան մէջ:



Մոնթեբելոյի
աւտոմայրուղում
տեղադրուել է
ճանապարհային նշան, որն
ուղղորդում է դէպի Հայոց
ցեղասպանութեան յուշարձան

2011-04-02

Ապրիլի 1-ին տեղի է ունեցել ճանապարհային նշանի բացման արարողութիւնը: Միջոցառմանը ներկայ էին Կալիֆորնիայի Վեհաժողովի մեծամասնութեան առաջնորդ Չարլզ Կալդերոնը, ANCA-ի Մոնթեբելոյի բաժանմունքի նախագահ Նազարէթ Սադորեանը, հաղորդում է Asbarez.com-ը:

Հայոց ցեղասպանութեան զոհերին նուիրուած յուշարձանը բացուել է 1968թ. ապրիլին ի յիշատակ

Հայոց ցեղասպանության նահատակների ու մարդկության դեմ բոլոր հացնագործությունների զոհերի:



Համագգայինը Գումարել Է Շրջանային Ժողով Եւ Ընտրել Նոր Ղեկավար Կազմ

2011-04-02

Օրուան հանդիսավար՝ շրջ. վարչության անդամ Ծովինար Մելքոնեանը, բարի գալուստ մաղթելով ներկաներին՝ շնորհակալութիւն յայտնեց նրանց, ովքեր ընդառաջելով շրջ. վարչության հրաւերին, եկել էին մէկ անգամ եւս զօրավիգ կանգնելու եւ վստահեցնելու, թէ բոլորս համագործակցութեամբ, ներդաշնակութեամբ եւ

փոխադարձ հասկացողութեամբ կը ծառայենք մեր ազգին՝ այս գաղութին մէջ զարկ տալով ազգային կեանքին, համագգային ճիգերով խանդ ու աւիւն ներարկելու Սփիւռքի ամենահզօր ներուժը ունեցող այս հայահոծ համայնքին, որ թէ՛ քանակի եւ թէ՛ որակի առումով գերակշիռ ներկայութիւն է հայ իրականութեան մէջ:

Այնուհետեւ իր բարի գալստեան խօսքերով ելոյթ ունեցաւ ընթացաւարտ շրջ. վարչության

ատենապետ Օհան Օհանեանը՝ վեր հանելով Համազգայինի Արեւմտեան Ամերիկայի շրջանի անցեալ երկու տարիների գործունէութիւնը ամփոփ կերպով, շեշտելով, թէ շրջ. վարչութեան գերագոյն ջանքը եղել է ներկայ ժամանակների մարտահրաւերներին համապատասխանեցուել եւ միեւնոյն ժամանակ հաւատարիմ մնալ մեր աւելի քան 80ամեայ միութեան առաքելութեանը:

«Իր յարատեւ աշխատանքով, շրջ. վարչութիւնը ընդլայնեց Համազգայինի գործունէութեան օղակը, չսահմանափակուեց աւանդական դարձած գործելակերպով, այլ ունեցաւ յանդգնութիւնը նոր նախաձեռնութիւններ յառաջ բերելու եւ յաջողեցնելու դրանք: Այս աշխատանքի արդիւնքը կը տեսնենք մեր գործունէութեան մէջ հետզհետէ երիտասարդների ներգրաւումով», յայտարարեց Օհան Օհանեան:

Համազգայինի կեդր. վարչութեան անդամ դոկտ. Վիգէն Եագուպեան իր խօսքերի մէջ ծանրացաւ Համազգայինի դիմագրաւած մերօրեայ մարտահրաւերների վրայ, շեշտելով, թէ ժամանակը եկել է գտնելու համաթոնը Համազգայինի աւանդական հայապահպանման գծով տարուող աշխատանքների եւ մեր ներկայ

պայմանների թելադրած հրամայականների միջեւ:

Յայտարարելով, թէ «Համազգայինը պահակն է մեր անցեալի, բայց նաեւ առաջնորդը եւ ստեղծագործը մեր ապագայ»՝ դոկտ. Եագուպեան յոյս յայտնեց, թէ Համազգայինի Արեւմտեան Ամերիկայի շրջանի 17րդ Ընդհանուր ժողովը պիտի գծէ այն ճանապարհը, որ Համազգայինի պիտի դարձնէ այդ կազմակերպութիւնը:

Այնուհետեւ բեմ հրաւիրուեց ՀՅԴ Բիւրոյի անդամ դոկտ. Վիգէն Յովսէփեանը: Ողջունելով ժողովը եւ շնորհաւորելով համազգայնական ընկերներին անցեալ երկամեայի իրենց հաւաքական ձեռքբերումների համար՝ դոկտ. Յովսէփեանը նշեց, թէ «Համազգայինը հայ մտաւորականութեան շտեմարանն է, եւ նրա համապատասխանեցումը օրուայ ակնկալութիւններին կը կայանայ նրանում, որ ինքը փորձում է իր նոր հորիզոններով ճամբայ բացել հայ նոր գրողների, մտաւորականների եւ արուեստագէտների համար»:

Սրբազան հայրը իր խօսքերի մէջ գոհունակութիւն յայտնեց մէկ անգամ եւս Համազգայինի ընտանիքին մէջ գտնուելու առիթով, շեշտելով, թէ Համազգայինը ծնունդն էր մեր ազգային

կարիքների, ու անիկա դարձաւ Սփիւռքի մեր ժողովրդի մշակոյթի նախարարութիւնը, իսկ այսօր նոյնպէս իր բաժինն է բերում վերանկախացած հայրենիքի մշակութային կեանքին, որպէս արթուն պահակը եւ տարածողը մեր մշակոյթին:

«Համազգայինը մեր մշակոյթի դրօշակակիրներից մէկն է յատկապէս Հայաստանի սահմաններից դուրս: Նրա հիմնադրութեան պատճառը եւ տասնամեակների գոյութեան իմաստը եղել ու մնում է հայապահպանումը՝ իր ամենալայն իմաստով, ծառայութիւն հայ գրին, արուեստին եւ տարածումը հայութեան արժէքների: Այս իմաստով, Համազգայինը յատուկ մի լծակցութիւն ունի մեր եկեղեցու հետ, որ դարեր շարունակ, պետական կառոյցներից զրկուած շրջաններում հաւատարմօրէն տարել է նոյն առաքելութիւնը», յայտարարեց սրբազան հայրը: Վերջում ան յոյս յայտնեց, թէ Համազգայինի շրջ. վարչութիւնը, Հայ մանուկի տարուան առիթով աշխատանքներ պիտի ձեռնարկի՝ մեր մշակութային արժէքները եւ կատարած սխրագործութիւնները յատկապէս հայ նոր սերնդին փոխանցելու ուղղութեամբ:

Աւարտին, սրբազան հօր «Պահպան» ջջով եւ սեղանների օրհնութեամբ վերջ գտաւ ձեռնարկի

պաշտօնական բաժինը եւ տեղի ունեցաւ ընթրիքի մատակարարում:

Յաջորդ օրը՝ Մարտի 19ին, առաւօտեան ժամը 10էն սկսեալ բացումը կատարուեց Համազգայինի Արեւմտեան Ամերիկայի շրջանի 17րդ Ընդհանուր ժողովին, որին մասնակցում էին Հովիտի «Պարոյր Սեւակ», Փասադինայի «Շահան Շահնուր», Օրենջ քաունթի «Սիամանթօ», Գլենդէյլի «Յովհաննէս Թումանեան», Ֆրեզնոյի «Դանիէլ Վարուժան» եւ Սան Ֆրանսիսկոյի «Նիկոլ Աղբալեան» մասնաճիւղերի, ինչպէս նաեւ Աւանդոյթներ, Երաժշտական եւ «Ան»ջ պարախմբի միաւորների ներկայացուցիչ պատգամաւորները ու մի շարք հրաւիրեալներ:

Մանրակրկիտ քննարկումներով ժողովը ծանրացաւ ընթացաւարտ շրջ. վարչութեան անցեալ երկու տարիների գործունէութեան, յաջողութեամբ իրականացուած ձեռքբերումների, դիմագրաւած դժուարութիւնների, արձանագրուած յաջողութիւնների եւ ձախողութիւնների վրայ, մանաւանդ՝ միութեան շարքերը երիտասարդականացնելու եւ այժմէական պահանջներին համապատասխանեցուելու, միաժամանակ մեր կոչումին հաւատարիմ մնալու

Եւ Համազգայինը նորօրեայ գործելաոճով օժտելու
անհրաժեշտութիւնների վրայ:

Վերջում ընտրուեց Համազգայինի Արեւմտեան
Ամերիկայի շրջանային նոր վարչութիւնը՝
բաղկացած հետեւեալ անդամներից.
Ռոժէ Խատրեան, Ծովիկ Կէտիկեան, Մարիա
Խարճեան, Սօնիկ Յարութիւնեան, Միրնա
Տուզճեան, Լիւսի Չուխաճեան, Լորի Թաթուլեան եւ
Ծովինար Մելքոնեան:

Ժողովի աւարտին, Համազգայինի կեդր.
վարչութեան անդամ դուրս. Վիգէն Եագուպեան
յաջողութիւն մաղթեց նորընտիր շրջ. վարչութեան
աշխատանքներին՝ յոյս յայտնելով, որ այս կազմը
լաւագոյն կերպով պիտի դիմագրաւի
դժուարութիւնները եւ յաջորդ հանգրուանին
առաջնորդի ու աւելի հզօր կազմակերպութեան
վերածի Համազգայինը:

<http://asbarez.com>

Լիբանանում տեղի կ'ունենան
միջոցառումներ՝ նուիրուած Այնթապի
հերոսամարտի 91-ամեակին

2011-04-01

1920 թուականի ապրիլի մեկին ժամանակակից գենքերով զինուած թուրքերը յարձակուեցին հայերի վրայ եւ սպանեցին ու վիրաւորեցին նրանց առանց տարիքի եւ սեռի խտրականութեան: Ընդհանուր ջարդը անխուսափելի էր, եթէ անհրաժեշտ կարգադրութիւնները նախօրօք եղած չլինէին: Դէպքը սկսած օրն իսկ, թաղերը եւ փողոցները փակուեցին պատնէշներով, ծրագրի համաձայն: Իրենց հայրերի, ամուսինների եւ զաւակների կողքին՝ հայ կանայք, դեռատի տղաներն ու մատղաշ աղջիկները քար ու ջուր էին կրում պատնէշների շինութեան աշխատանքի համար: Թուրքերը մեծ ուժերով յարձակուեցին բազմաթիւ անգամներ: Սակայն բախուելով հայ մարտիկների բուռն ընդդիմութեանը՝ փախուստի դիմեցին մեծ կորուստներով: Ապրիլի 16-ին կռիւները ստացան նոր բնոյթ մինչ այդ կրաւորական դիրք որդեգրած ֆրանսիական ուժերի մասնակցութեամբ: Գնդապետ Նորմանն իր բանակով մտաւ Այնթապ: Այնթապցիների պաշտպանութեան գիծը մօտաւորապէս 5 քառակուսի կիլոմետր էր: Եւ այս ճակատը պաշտպանելու համար ունէին միայն 300 հրացան: Մայիսի 15-25-ը ռազմաճակատի ամբողջ երկայնքով թուլացաւ կռիւների թափը: Յունիսի 8-

ին ֆրանսիացիները գործադրեցին զինադադարի իրենց յանձնառութիւնը, բայց հայ կորիւնները կառչած մնացին իրենց դիրքերին:

Գնդապետ Ապատին նոյն օրը յայտարարեց Ազգային Միութեանը, թէ կտրուկ հրահանգ է ստացել Այնթապից հեռանալու եւ թէ անկարելի է իր համար որեւէ ձեւով օգնել հայերին, հակառակ իր ցանկութեան: Յանձնարարուած էր համաձայնել թուրքերի հետ խաղաղութեամբ ապրել նրանց կողքին՝ որպէս հաւատարիմ քաղաքացիներ թուրքական պետութեանը: Հայերը ստիպուած լքեցին Այնթապը եւ գաղթեցին այլ երկրներ: Նրանց մեծ մասը հիմնուեց Լիբանանում եւ հիմնեց Այնթապ գիւղը:



«Ազգ». ԱՄՆ-ում սկսուել է Յեղասպանութեան ճանաչման արշաւը

2011-04-01

«Ժամանակն է կոնկրետ գործերով իրականացնելու յոյսերը: Սա է 2011 թուի Հայոց ցեղասպանութեան ցուցատախտակի պատգամը: «Peace of Art է կորպորացիայի հովանաւորութեամբ պատրաստուած ցուցատախտակներն ապրիլի 4-ից կը բարձրացունեն Ուորթերթաունի Մաունթ

Օբլրն փողոցի սիւների վրայ:

Իսկ Ֆոքսֆորոյում, «Ժիլետէ մարգադահիլիճի մօտակայքում արդէն իսկ տեղադրուած ցուցատախտակը կոչ է անում «Ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը: Պատգամը յղում է 2009 թուին իսաղաղութեան Նոբելեան մրցանակի արժանանալու առթիւ նախագահ Օբամայի խօսքերին, որոնցով նա այդ որոշումը որպէս աւելի «գործողութեան կ'ոչէ ընդունեց, քան իր ձեռքբերումների գնահատանք:

«Peace of Artե-ի հիմնադիր եւ տնօրէն Դանիէլ Վարուժան-հաճինեանն էլ այս տարուայ ցուցատախտակներով ցանկանում է յիշեցնել նախագահ Օբամային, որ հիմա է ժամանակը «կոնկրետ գործերով իրականացնելու յոյսերը», - գրում է «Ազգ»-ը:



ՎԻԳԵՆ ԶԱԼԴԻՐԱՆԵԱՆ
ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ

2011-03-31



Էթնիկ հայ Դարոն
Աճեմօղլուի նշանակումը
Ֆրանսիայում Թուրքիայի

դեսպան Էրդողանի PR-քարոզարշաւի մի մասն է

2011-03-30

Այդ մասինPanARMENIAN.Net ի թղթակցին է յայտնել թուրքագետ ռուբեն Մելքոնեանը: Նրա խօսքով, այդ քարոզարշաւն ուղղուած է Եւրոպայի աչքին Թուրքիայի կերպարի բարելամանը՝ շուտափոյթ կերպով Եւ-ին անդամակցելու համար:

«Թուրքիայի Հանրապետութեան պատմութեան մեջ սա ընդհանրապէս առաջին դէպքն է, երբ հայը որեւէ պաշտօնի է նշանակուում: Մինչ օրս նման բան երբեք չէր կարող լինել: Օսմանեան կայսրութիւնում եղել են դէպքեր. 1912 թուականին Թուրքիայի արտգործնախարարը Նորատունկեանն էրէ,- ասել է Մելքոնեանը: Հայ թուրքագետն ընդգծել է, որ եթէ Էրդողանը Եւ-ին անդամակցելու նպատակով նման լայն քարոզարշաւ է ձեռնարկել, ապա կարող է եւ հասնի իր ուզածին:

Ֆրանսիայում Թուրքիայի նորանշանակ դեսպանը էթնիկ հայ Դարոն Աճեմօղլուն է: Այդ մասինPanARMENIAN.Net ին յայտնի դարձաւ

Թուրքիայի Ազն-ում ունեցած աղբիւրներից:
Դարոն Աճեմօղլուն էկոնոմիկայի պրոֆեսոր է
Ստամբուլից, MIT տնտեսութեան ամբիոնի
վարիչը: Նա ղեկավարում է նաեւ մասնագէտների
մի խումբ, որը տնտեսութեան ոլորտում
իրականացրած հետազոտութիւնների համար
երկու անգամ առաջադրուել է Նոբելեան
մրցանակի:



Ամերիկացի
կոնգրէսական Ադամ
Շիֆի ընտրատարածքում
«տարուայ կ'ինէ տիտղոսը շնորհուել է
Մարօ Քեշիշեանին

2011-03-30

«Մարօն անխոնջ աշխատում է ի նպաստ հայ
համայնքի, ակտիւօրէն մասնակցում է բոլոր
նախաձեռնութիւններին եւ միջոցառումներին,-
ասել է Շիֆը:

Մարօ Քեշիշեանը ծնուել էւ մեծացել է
Լիբանանում, այնտեղ է կրթութիւն ստացել, 8
տարի եղել է հայկական դպրոցի տնօրէն: 1984
թուականին նա տեղափոխուել է ԱՄՆ եւ
գլխաւորել է Լոս Անջելեսի «հոմենթմենթ: Մարօ

Քեշիշեանը շուրջ 20 տարի թղթակցել է Asbarez թերթին՝ գրելով Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի մասին:

Այժմ Մարո Քեշիշեանը Հայ օգնության միության գործադիր քարտուղարն է: Ամեն տարի, «կանանց ամիսը պատմության մեջ է միջոցառումների ընթացքում կոնգրեսական Շիֆր պարգևատրում է 29-րդ ընտրատարածքի կանանցից մեկին:



Հայազգի Աջեմօղլուն
հրաժարուել է Փարիզում
Թուրքիայի դեսպանի
պաշտօնից՝ պատճառաբանելով
գիտական աշխատանքը

2011-03-30

Ինչպես գրում է թուրքական Today's Zaman-ը, այդ նախաձեռնությունը կոչուած էր հալեցնելու սառոյցը հայ-թուրքական յարաբերութիւններում: Մասնաւորապէս, համաշխարհային համբաւ ունեցող տնտեսագէտ դարոն Աջեմօղլուն պէտք է ներկայացնէր Թուրքիան Տնտեսական համագործակցութեան ու զարգացման կազմակերպութիւնում (ՏՀԶԿ):

Բրիւսելում «Թուրքիայի քաղաքականութիւնը ժամանակակից աշխարհումէ փակ խորհրդածողովում Դաւութօղլուն յայտարարել էր, որ Թուրքիան ցանկանում է ոչ միայն շարունակել հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորմանն ուղղուած ջանքերը, այլ նաեւ պետական պաշտօններում նշանակել հայազգի քաղաքացիների: «մենք ցանկանում էինք Աջեմօղլուին նշանակել Թուրքիայի ներկայացուցիչը Տնտեսական համագործակցութեան ու զարգացման կազմակերպութիւնում (ՏՀԶԿ), սակայն նա չընդունեց առաջարկը, պատճառաբանելով գիտական աշխատանքը,-մեջբերում է Դաւութօղլուի խօսքերը թուրք դիւանագէտը:

Նախօրէին աղբիւրը Թուրքիայի Ազն-ում յայտնել է, որ Աջեմօղլուն պետք է նշանակուի Թուրքիայի դեսպանը Ֆրանսիայում: Դարոն Աջեմօղլուն տնտեսագիտութեան պրոֆէտոր է Ստամբուլից, MIT տնտեսագիտութեան ամբիոնի ղեկավարն է: Նա ղեկավարում է նաեւ մի խումբ մասնագետների, որը երկու անգամ ներկայացուել է Նորելեան մրցանակի տնտեսագիտութեան ոլորտում հետազօտութիւնների համար:



2012 թուականին Պերմի երկրամասում կ'աւարտուի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ

Եկեղեցու կառուցումը

2011-03-29

Նրա խօսքերով 2001 թուականից սկսած Պերմի հայկական համայնքը փորձել է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին կառուցելու համար թուլտուութիւն եւ հողատարածք ձեռք բերել: Սակայն հողատարածքի հարցը լուծուել է միայն միայն 2007 թուականին: 2008-ին օծուեց եկեղեցու հիմքը. այս պահին եկեղեցու կառուցման աշխատանքները դեռեւս ընթացքի մէջ են:

«Եկեղեցու կողքին տարածք է յատկացուել նաեւ հայկական դպրոցի, մշակութային կենտրոնի եւ թանգարանի համար: Կառուցում է հանդիսութիւնների սրահ, որից ստացած հասոյթը պատկանելու է եկեղեցուն, որպէսզի ապահովի եկեղեցու ֆինանսական կ'այունութիւնը,-մանրամասնեց Արմէն Գարսլեանը:



Սանկտ Պետերբուրգի հայ համայնքը «միսս հայկական մարզարիտէ մրցոյթում կ'ընտրի ամենագեղեցիկ հայուհուն

2011-03-29

Մէկ ամսուայ ընթացքում մոդելային գործակալութիւնների ներկայացուցիչները ռուսական գեղեցկութեան մրցոյթների բազմակի յաղթող Եկատերինա Գուսեւայի հետ մշակում են մասնակիցների քայլուածքը: Բացի դրանից, աղջիկները փորձում են տաղանդների մրցոյթին ներակայանալու համար անհատական համարները, հաղորդում է miasin.ru-ն:

Մարտի 26-ին մասնակիցներն անցել են բարդ փորձութիւն՝ բրէյն-ոփնգ, որտեղ պահանջուել է ցուցաբերել հարցերին արագ եւ դիպուկ պատասխանելու կարողութիւն, որոնք բացառապէս հայկական թեմատիկայ են ունեցել:

Միջոցառման գլխաւոր կազմակերպիչներ Կ'արինայ Տիրաբեանի եւ Մարինա Սարուխանեանի խօսքերով, մրցոյթին

պատրաստուելը պէտք է օգնի մասնակիցներին մէկ թիւ գգալ իրենց, իսկ նրանց իւրաքանչիւրի համար գլխաւոր նուէրը լինելու է հեռաւոր հայրենիքի մշակոյթի հետ մերձեցումը:

Մրցոյթի գալա-համերգը տեղի է ունենալու 2011-ի ապրիլի 10-ին «ամրոցէ ռեստորանի համերգասրահում:



Պիեռ Ֆատտուշը միաձայն ընտրուել է Լիբանան-հայաստան

բարեկամական ասոցիացիայի նախագահ

2011-03-28

Նա համոզմունք է յայտնել, որ նորաստեղծ ասոցիացիան իր անդամների մեծ ներուժի եւ ակտիւ գործունէութեան շնորհիւ աւելի կը խորացնի եւ կ'ընդլայնի հայ-լիբանանեան երկկողմ բարեկամական յարաբերութիւնները տարբեր փոխշահաւէտ ոլորտներում, յայտնում է ՀՀ ԱԳՆ մամլոյ ծառայութիւնը:

Լիբանան-հայաստան բարեկամական ասոցիացիայի նախագահ միաձայն ընտրուել է

յայտնի գործարար, հայ ժողովրդի մեծ բարեկամ
Պիեռ Ֆատտուշը: Ընտրուել են նաև
ասոցիացիայի տնօրենների խորհրդի անդամները:
Լիբանանում Հայաստանի դեսպանին
առաջակուել է ասոցիացիայի պատուաւոր
նախագահի պաշտօնը:

Քննարկուել եւ ուրուագծուել են նաև
ասոցիացիայի յետագայ գործունէութեան
առանցքային ուղղութիւնները: Ստեղծուել է
աշխատանքային խումբ, մայիսի սկզբին
կազմակերպուելիք պաշտօնական միջոցառմանն
առնչուող աշխատանքները համակարգելու
նպատակով:

Ասոցիացիայի գլխաւոր նպատակն է զարգացնել
եւ ընդլայնել Լիբանանի եւ Հայաստանի երկկողմ
յարաբերութիւնները, մասնաւորապէս
առեւտրատնտեսական, մշակութային, կրթական,
առողջապահական, զբօսաշրջութեան եւ այլ
ոլորտներում, ինչպէս նաև բացայայտել նոր
հնարաւորութիւններ փոխադարձ
հետաքրքրութիւն ներկայացնող ներդրումային
ծրագրերի իրականացումը խրախուսելու
նպատակով:

Պիեռ Ֆատտուշը միաձայն ընտրուել է Լիբանան-հայաստան բարեկամական ասոցիացիայի նախագահ



**Մինգապուրի հայ
համայնքը մեծ շուքով
նշել է երկրի ամենահին
քրիստոնէական եկեղեցու 175-
ամեակը**

2011-03-28

Մբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին գտնուում է Մինգապուրի Հիլ փողոցում. այն ամենահին քրիստոնէական եկեղեցին է եւ ազգային յուշարձան է դարձել 1973 թ.:

Այդ օրուայ առթիւ եկեղեցու հոգաբարձուները շաբաթ գալայ ընթրիք էին կազմակերպել «ռաֆլզէ հիւրանոցում, որը 1887 թ. կառուցել են հայազգի եղբայրներ Տիգրան եւ Աւետիք Սարգիսները: Յատուկ այս տօնակատարութեան համար Մինգապուր ժամանած արքեպիսկոպոսը պատարագ է մատուցել Մբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում կիրակի օրը:

Մինգապուրի արտաքին գործերի նախարար Ջորջ

Յէոն, որը եւս պատարագի մասնակիցների թուում էր, հարցազրոյց է տուել The Straits Times թերթին, որում նշել է, որ հայկական եկեղեցին եւ համայնքը Մինգապուրի ժառանգութեան կարելոր մասն են:

Մինգապուրում ապրում է շուրջ 80 հայ: Փոքրաթիւ համայնքը վերջին հինգ տարում կրկնապատկուել է՝ հիմնականում Հայաստանից տեղափոխուածների հաշուին: Վերջին երկու տարիների ընթացքում Մինգապուրում 10 հայ երեխայ է ծնուել:

Իրավիճակը Դամասկոսում հանգիստ է, սիրիահայ համայնքում հաւաստիացնում են, որ իրենց ոչինչ չի սպառնում

2011-03-28

«Դամասկոսում անկարգութիւններ չկան, դասերը դպրոցներում ու համալսարաններում ընթանում են սովորականի պէս: Ես այժմ պատրաստում եմ դասախօսութեան գնալ համալսարան», -ասել է նա:

Ըստ Արիսեանի, համայնքից ոչ ոք մտադիր չէ լքել Սիրիան: «մենք գիտենք, որ շուտով բարեփոխումներ կ'իրականացուեն պետական

կառավարման համակարգում եւ այն ժամանակ իրավիճակն առաւել հանգիստ կը դառնայ: Հայերի համար տուեալ դէպքում ոչինչ չի փոխուի՝ մենք հանգիստ ապրում ենք եւ սատարում ենք նախագահ Բաշար ալ-ասադինէ,-ասել է Արիսեանը:

Միրիայում հայերն ունեն դպրոց, գործող եկեղեցիներ, գործող կազմակերպութիւններ: Այդ արտօնութիւնները տարածւում են միայն հայ փոքրամասնութեան վրայ, միւս ազգային փոքրամասնութիւնները նման արտօնութիւններ չունեն: Միրիայում հայերի քանակը հասնում է 100 հազարի:



Հայկական Բարեկենդանը՝ Դանիայի հայ համայնքում

2011-03-28

Միջոցառման ընթացքում կազմակերպուել են տարբեր զուարճալի եւ հետաքրքիր խաղեր, որից յետոյ երեխաները պէտք է օգտուէին առաստաղից կախուած տակառի քաղցրաւենիքներից: Դա եւս հետաքրքիր մի խաղ էր. այն երեխան, ով կը կարողանար ամբողջութեամբ կոտրել տակառը,

կը ստանար նուէր եւ թագաւորական թագը:

Միջոցառմանը, որին ներկայ էին նաեւ հիւրեր Անգլիայից, մասնակցել են աւելի քան 45 մարդ՝ ազգութեամբ հայ եւ դանիացի:

Ներկայ գտնուող հիւրերն յայտնել են իրենց գոհունակութիւնն ու խորին շնորհակալութիւնը այդ գեղեցիկ միջոցառման հայեցի կազմակերպման եւ անցկացման համար:

Հասարակութիւն



Վերջին երեք տարում
Արցախ է տեղափոխուել
440 ընտանիք, որոնցից

130-ը՝ միայն անցեալ տարի

2011-03-31

Ողջունելով նիստին ներկայ պաշտօնատար անձանց եւ սոցապահովութեան ոլորտի պատասխանատուներին՝ կառավարութեան ղեկավարը ճիշտ եւ դրական համարեց առաջին անգամ կիրառուող նման ձեւաչափով տարուայ կատարուածի ամփոփումը:

ԼՂՀ սոցապահովութեան նախարար Նարինէ

Ասծատրեանը ըստ ոլորտների ներկայացրեց հաշուետու տարում կատարուած աշխատանքները: Նշուել է, որ ժողովրդագրական ոլորտում իրականացուած ծրագրերի արդիւնքում արձանագրուել են դրական մի շարք ցուցանիշներ: Միգրացիոն քաղաքականութեան հիմնական նպատակը մարդկանց ներհոսքի խթանումն է:

Սոցապնախարարը շեշտել է, որ միայն պետական բիւջէի միջոցները բաւարար չեն այս ոլորտի խնդիրների լուծման համար: Այնուամենայնիւ, աշխատանքներ իրականացուում են, ինչի արդիւնքում վերջին երեք տարուայ ընթացքում հանրապետութիւն է տեղափոխուել աւելի քան 440 ընտանիք, որից 130-ը` միայն անցած տարի: Վարչապետը անդրադարձաւ, որ վերջին տարիներին վերաբնակեցման ոլորտում արուած փոփոխութիւնները արձանագրուում են թէկուզեւ դանդաղ, սակայն դրական տեղաշարժեր: Օրինակ, անցած 7 ամիսներին միայն Քաշաթաղի շրջանում վերաբնակուել է մօտ 300 ընտանիք: Նշուեց, որ շարունակուելու են հայրենադարձութեան ծրագրերը:



Ստամբուլի դատարանը մերժել է Դինքի

ընտանիքի փաստաբանների` Օգիւն Սամաստի հորը նիստին կանչելու պահանջը

2011-03-31

Ինչպէս յիշեցնում է թուրքական Today's Zaman-ը, անմիջապէս սպանութիւնից յետոյ Օգիւնի հայրը՝ Ահմեդ Սամաստը ոստիկանի այն հարցին, թէ որտեղ է նրա որդին, պատասխանել է, որ այդ մասին աւելի լաւ կ'իմանայ Տրաբզոնի ոստիկանութեան պետը:

Փաստաբան Ֆեթիէ Չեթինի պահանջով, Դինքի սպանութեան մասին եւ սպանուած անձի մասին տեղեկութիւնները Տրաբզոնի դատախազութիւն է ներկայացրել ոստիկանութեան նախկին պետ Էմին Արսլանը եւ ոստիկանութեան գլխաւոր տեսուչ Լեւենթ Եարիմելը:



Վրաստանի հայկական դպրոցներում կը վերականգնուի հայոց լեզի դասաժամերի նախկին ծաւալը

2011-03-30

Ըստ նրա, եթէ 2010թ. հայոց լեզուի դասաժամերի քանակը շաբաթական 5 ժամ էր, ապա այսուհետ

կը վերականգնուի դասաժամերի նախկին ծաւալը՝ 7-8 ժամ: «Ես դա համարում եմ մեծ նուաճում եւ շնորհակալ եմ իմ վրաց գործընկերոջը այս հարցին արագ արձագանքելու համարէ,-ասել է Աշոտեանը: Բացի այդ, Աշոտեանը յայտնել է նաեւ, որ պայմանաւորուածութիւն է ձեռք բերուել այն մասին, որ հայկական դասագրքերը հրատարակուելուց առաջ կ'ուղարկուեն հայ մասնագէտներին՝ խմբագրման ու թարգմանութեան անճշտութիւնների շտկման համար:



**Արցախեան
ազատամարտի հերոս
Ռմիտրի Մօտրիչը ՀՀ
նախագահի անունից յետմահու
պարգևատրուել է «արիութեան է
մեդալով**

2011-03-29

Ինչպէս PanARMENIAN.Net ին հաղորդեցին Ռուսաստանում Հայաստանի դեսպանատնից, յանձնման արարողութիւնից առաջ դեսպանը ներկայացրեց դարաբաղեան հիմնախնդրի ծագման նախապատմութիւնն ու խօսեց 90-ականներին ազգային ազատագրական շարժման

վերսկսման շարժառիթների մասին:

Յանձնելով մեղալը՝ դեսպան Օլեգ Եսայեանը ողջ հայ ժողովրդի խորին շնորհակալութիւնը յայտնեց ռուս կամաւորի մօրը՝ վստահեցնելով, որ Արցախն ու հայ ժողովուրդը չեն մոռացել նրա որդու սխրագործութիւնը: Իր խօսքում Օլեգ Եսայեանն ասաց. «Ես ծնունդով Արցախի Մարտունու շրջանից եմ եւ այս մեղալի յանձնումը, որի մէջ իւրաքանչիւր հայի երախտագիտութեան մասնիկն է, ինձ համար մեծ կարելորութիւն ունի: Շնորհիւ Դիմա Մօտրիչի հերոսական քայլերի թշնամու յարձակումը ԼՂՀ Մարտունու շրջանի ուղղութեամբ կանգնեցուեց: Դիման եւ իր ընկերկամաւորները հայ ժողովրդի հետ միասին հաւատացին ընտրած ճանապարհի ճշմարտացիութեանը եւ իրենց սխրագործութիւններով ձեռք բերեցին անմահութիւն մեր սրտերում եւ վերածնուած Արցախի պատմութեան էջերում: Նրանց համար այս պատերազմը պատուի եւ գաղափարի համար պայքար էրէ: Ռուս կամաւոր Դմիտրի Մօտրիչը Վլադիլոստոկ քաղաքից 90-ականներին սրտի կանչով թողեց հայրենի տունն ու մեկնեց Ղարաբաղ, որպէսզի օգնի հայ ժողովրդին եւ նրա

հետ միասին պայքարի յանուն հայերի անկախության: Առաջին իսկ մարտից մինչև նոյեմբերգական մահը Դմիտրին դարձավ հայ եւ ռուս ժողովուրդների միջև փոխօգնության խորհրդանիշ:

Օլեգ Եսայեանը նշեց նաեւ, որ «արիությանէ համար մեղալով պարգեւատրում են հայրենիքի պաշտպանության ժամանակ անձնական խիզախության համար, եւ Հայաստանն ու ազատագրուած Արցախը Դիմտրի Մօտրիչի եւ նրա ընտանիքի համար այլեւս երկրորդ հայրենիք են:

Միջոցառումը շարունակուեց Դմիտրի Մօտրիչին նուիրուած ռեժիսոր Ա.Թովմասեանի «կամաւորէ ֆիլմի ցուցադրութեամբ:



Օրհան Փանուրը Հայոց ցեղասպանության մասին իր խօսքերի

համար պէտք է վճարի 4000 դոլար

2011-03-28

«Թուրքերը սպանել են 20 հազար քրդի եւ 1 միլիոն հայիէ,- ասել է Փանուրը 2005-ին շուեյցարական թերթին տուած հարցազրոյցում: Դատական

գործընթացի համաձայն, գրողը 15 օր ունի բողոքարկման համար, գրում է թուրքական Milliyet թերթը: Իրաւական հարցերով փորձագետ Էրսան Շէնը նշել է, որ դատարանը երկարացրել է բողոքարկման իրաւունքը մինչեւ մէկ տարի: «սակայն այդ որոշումը նախադէպ է նման դէպքերի համարէ,- ասել է նա:

Մեղադրանքի հեղինակները եղել են 5 հոգի՝ ներառեալ փաստաբան Քեմալ Քերիինչսիզը, որը ներկայ պահին ձերբակալուած է «Էրզենէքոնիէ գործով: Մեղադրողները խօսում են, որ նրանք զինուորների յետնորդներ են, որոնք սպանութիւններ են գործել եւ կարծում են, որ Փամուքը վիրաւորել է թուրքերի ազգային արժանապատուութիւնը: Շիշլիի դատարանը 2005-ին չեղեալ է համարել մեղադրանքները, սակայն յետոյ գործը յանձնուել է լրացուցիչ քննութեան: 2009-ին դատարանը որոշել է, որ մեղադրողներն իրաւացի են:

Մշակոյթ



Էմմիի եւրատեսիւեան
փրոմո-արշաւը յազեցած
է, նա կ'այցելի Կիւեւ,

Քիշնեւ, Նիդերլանդներ, Աթէնք եւ

Վարշաւայ

2011-04-04

Հայաստանը Եւրատեսիլ 2011-ին կը ներկայացնի երգչուհի Էմմին, ով ելոյթ կ'ունենայ «Boom-Boom» երգով (երաժշտութիւն՝ Apricota խմբի, բառերը՝ Սօսի Իսանիկեանի, գործիքաւորումը՝ Արա Թորոսեանի): Այս երգն ընտրուել էր մարտի 5-ին Հանրային հեռուստարձկերութեան եթերում SMS քուէարկութեան եւ պրոֆէսիոնալ ժւրիի որոշմամբ՝ 50/50 յարաբերութեամբ: Էմմին ելոյթ կ'ունենայ մայիսի 10-ին:

Այս տարի Դիւսելդորֆում կայանալիք Եւրատեսիլ 2011-ին կը մասնակցի 43 երկրի ներկայացուցիչ: Մասնակից երկրներն արդէն ընտրել են իրենց երգիչ-երգչուհի ներկայացուցիչներին: Ինչպէս յայտնում է մրցոյթի պաշտօնական կայքը, Եւրոպական հեռարձակողների միութիւնը արդէն ստացել է բոլոր մասնակիցների երգերը:

Եւրատեսիլ 2010-ին մասնակցել էր 39 երկիր:



Նիդերլանդներում տեղի կ'ունենայ

Ցեղասպանութեան 96-ամեակին

նուիրուած ոգեկոչման համերգ

2011-04-03



Հրաչ Թիթիզեանը

Բրողուելում խաղում է

Ուղեյ Յուսէինի

ուրուականի դերը, որը յայտնում է

զինուորին՝ Ռոբին Ուիլեամսին

2011-04-03

«ռոբին Ուիլեամսը հանճարեղ դերասան է եւ հիանալի մարդ, ես դա հէնց այնպէս չեմ ասում, դա իսկապէս այդպէս էէ,- ասել է Թիթիզեանը:

Ներկայացումը հիմնուած է իրական դէպքերի վրայ: 2003-ին Իրաքեան պատերազմի առաջին օրերին Բաղդադի կենդանաբանական այգուց փախել է վազր, որն աւելի ուշ սպանուել է երկու ամերիկեան զինուորների կողմից: Դրանից յետոյ զինուորների եւ նրանց թարգմանչի կեանքը փոխուել է, քանի որ նրանց սկսել է հետապնդել Սադամ Յուսէինի աւագ որդու՝ Ուղեյ Յուսէինի ուրուականը: «այս ներկայացումը յստակ սիւժէ չունի, այն ներկայացում է կեանքի, էքզիստենցիալիզմի, կրօնի, փիլիսոփայութեան եւ

ժլատութեան մասին: Բեմականացումը շատ հարցեր է տալիս եւ ստիպում հանդիսատեսին մտածել: Նման բան հանդիսատեսը դեռ չի տեսել,- պատմում է Թիթիզեանը, որը ներկայացման մեջ կատարում է Ուդեյ Յուսէինի ուրուականի դերը, գրում է Asbarez-ը:



PBS-ի եթերում

Ֆլորիդայում


ցուցադրուելու է «հայոց ցեղասպանութիւնէ փաստագրական ֆիլմը

2011-04-02

«հայոց ցեղասպանութիւնէ փաստագրական ֆիլմի ցուցադրութիւնն ու դրան յաջորդող բանավեճը տեղի կ'ունենայ Ֆլորիդայում «պատերազմի մեծ յանցագործութիւնները. Հայոց ցեղասպանութիւնը Առաջին աշխարհամարտի տարիներինէ ծրագրի շրջանակներում: Ապրիլի 27-ին նոյն վայրում տեղի կ'ունենայ 1,5 մլն հայերի ոչնչացման մասին պատմող ցուցահանդէսի բացումը: «հայոց ցեղասպանութեան մասին իրազեկման մեկամսեակիէ շրջանակներում միջոցառումներն անցնում են Հոլոքոսթի կենտրոնի հովանու ներքոյ: Կենտրոնի ծրագրում են նաեւ

ցեղասպանությունների ուսումնասիրությունը
Բոսնիայում, Ռուանդայում եւ Դարֆուրում,
ինչպես նաեւ դրանց կանխարգելման միջոցները:

«հայոց ցեղասպանությունէ ցուցահանդէսը կը
փակուի ցուցահանդէսի առաջատար պատմաբան
ու համակարգող Մերի Ջոնսոնի յատուկ
դասախօսութեամբ: Դասախօսությունից յետոյ,
ապրիլի 25-ին Բոկայ Ռատօնէի Սբ Դաւիթի
եկեղեցում եւ Կ'ուպեր-սիթիի Սբ Աստուածածնի
եկեղեցում տեղի կ'ունենայ 1,5 մլն զոհերի
յիշատակին նուիրուած հոգեհանգստի
արարողությունը:



**Լայզայ Մինելին, Էլթոն
Ջոնը, Սելին Դիոնը իրենց
ներկայութեամբ կը**

**պատուեն Ազնաւորին նուիրուած
միջոցառումը**

2011-04-01

Հանդիսաւոր երեկոն կը վարեն յայտնի երգչուհի ու
դերասանուհի Լայզայ Մինելին եւ դերասան Էրիկ
Պօղոսեանը: Երեկոյի պատուաւոր հիւրերը կը
լինեն Էլթոն Ջոնը, Սելին Դիոնը, Ատոմ Էգոյեանը,
ինչպէս նաեւ Ամն-ում Հայաստանի ու Ֆրանսիայի

դեսպաններն ու այդ երկրների
ներկայացուցիչները Մակ-ում:

Հանդիսաւոր միջոցառման հասոյթը կ'ուղղուի
Հայաստանի միայնակ տարեցներին, այդ թւում
նաեւ Վանաձորի տարեցների տանը, որի
հիմնադիրն է Ազնաւուրը:

Այս տարի լրանում է Շառլ Ազնաւուրի Pour
L'Armenie հիմնադրամի ու Հայ օգնութեան ֆոնդի
համագործակցութեան 10 տարին: «հիմնադրամն
ու Ազնաւուրը մէկ առաքելութիւն ունեն` օգնել
Հայաստանին դառնալ բարգաւաճ,
ժողովրդավարական երկիրէ,-ասել է Հօֆ-ի
գործադիր տնօրէն Գառնիկ Նանագուլեանը,
գրում է Mirror-Spectator թերթը:



Արթուր Աբրահամը

Boom-Boom երգի

տեսայոլովակի գլխաւոր հերոսն է, որը Էմմիի կատարմամբ կը հնչի Եւրատեսիլում

2011-03-29

Այդ մասին Երեւանում կայացած մամլոյ
ասուլիսում յայտարարել է ինքը Էմմին: Նա

հրաժարուել է բացայայտել կը լիպի սիւժէի
մանրամասները՝ նշելով, որ կլիպը
նկարահանում է Հայաստանում ու
Գերմանիայում եւ աւարտին կը հասցուի մէկ
շաբաթում:

Էմմին յայտնել է նաեւ, որ առաջիկայ օրերին նա
կը սկսի իր պրոմո-տուրը եւրոպական երկրներով,
իսկ իր ելոյթը Եւրատեսիլում նուիրում է իր հօր՝
քանդակագործ Դաւիթ Բեջանեանի յիշատակին,
որը վախճանուեց փետրուարին:

Boom-Boom երգը (երաժշտութիւնը՝ Apricota խումբ,
խօսք՝ Սօսի Խանիկեանի, գործիքաւորումը՝ Արա
Թորոսեանի), որով Էմմին հանդէս կը գայ
Եւրատեսիլում, ընտրուեց մարտի 5-ին
Հայաստանի Հանրային հեռուստատեսութեան
երթերում SMS-քուէարկութեան եւ ժիւրիի որոշման
միջոցով՝ 50/50 յարաբերակցութեամբ: Էմմին
հանդէս կը գայ մայիսի 10-ին 4 համարի տակ:

Ընդհանուր առմամբ «Եւրատեսիլ-2011» է մրցոյթին
Դիւսելդորֆում կը մասնակցեն 43 երկրների
ներկայացուցիչներ: Եւրատեսիլի մասնակից
երկրները արդէն անց են կացրել ազգային
ընտրութիւնները եւ որոշել են իրենց

մասնակիցների անունները: Եւրոպայի
հեռարձակողների միութիւնը արդէն ստացել է
Եւրատեսիլի մասնակիցների բոլոր երգերը: 2010թ.
Եւրատեսիլին մասնակցեց 39 երկիր:

Ռուս ընթերցողի դատին կը
ներկայացուի «գրիգոր Նարեկացին եւ
Միջնադարի հոգեւոր մշակոյթը
գիրքը

2011-03-29

Դա ռուսերէնով առաջին աշխատանքն է՝
նուիրուած Նարեկացու «մատեան ողբերգութեանէ
պօէմի 1000-ամեակին: Գրքում ներկայացուած են
ռուս եւ հայ հետազօտողների, ինչպէս նաեւ ԱՄՆ,
Իտալիայի, Ֆրանսիայի գիտնականների
աշխատանքները: Գրքում ներառուած է
Նարեկացու պօէմը:

Հրատարակութիւնը պատրաստուել է ՌԳԱՅ Ա. Ս.
Գորկու անուան համաշխարհային
գրականութեան ինստիտուտի եւ ՀՀ ԳԱԱ
Արեղեանի անուան Գրականութեան ինստիտուտի
կողմից:

Գիրքը կազմուած է Ռուսաստանի, Հայաստանի,
Ֆրանսիայի, Իտալիայի, Ամն-ի առաջատար

գիտնականների 28 յօդուածներից, որոնց թում էն՝ Մատենադարանի տնօրէն Գ. Թամրազեանը, Ա. Եղիազարեանը, Ա. Իսահակեանը, միջնադարի գծով խոշոր մասնագէտներ Կ. Տէր-դաւթեանը, Լ. Սազոնովան, առաջատար նարեկացիագէտ, ֆրանսերէն լեզուի թարգմանութեան հեղինակ Ժան Պիեր Մայեն, Փիթեր Քոուին (ԱՄՆ) եւ այլն, գիտութիւնների դոկտորներ, արուեստաբաններ, պատմաբաններ, երաժշտագէտներ: Գրիգոր Նարեկացու «մատեան ողբերգութեանէ պօէմը արժէք է, որով հայ ժողովուրդը մտնում է համաշխարհային մշակոյթի մէջ: Նրա անունը դասում է Դանթէի, Շեքսպիրի, Սերուանտեսի անունների շարքին:



Դերասան Օնիկ
Կեցոյեանը մասնակցում
է Աթէնքի գլխաւոր
ներկայացումներից մէկում

2011-03-28

«Միներգիո» թատերասրահում ապաստանեալների եւ գաղթականների մերօրեայ կեանքը բեմադրել է յոյն ռեժիսոր Խրիստոս Ստրեպկոսը:

«Խայտաբղետ թուրթակ» Պիետը ներկայացնում է

Երեք գաղթականների առօրեան, ովքեր էժան աշխատավարձի, ռասիզմի ու խտրականութեան, յանցագործութեան եւ գետոյական կեանքի ամենօրեայ գոյապայքարի մէջ են:

Երեք գաղթականներին միացնողը մի խանութում վաճառուող «խայտաբղետ թութակե-ն է, որի տերն էլ, պատահաբար, տեղացի մի հայ կին է՝ Մելինան:

Թատերական ներկայացումը շարունակուելու է մինչեւ Զատիկի տօները:

Մպորտ



Ռոման Ամոյեանը
Եւրոպայի յունա-
հռոմէական

ըմբշամարտի չեմպիոն է դարձել

2011-04-03

Նրանք չորս քաշային կարգերից երեքում մեդալներ նուաճեցին: Հերթական անգամ իր հնարաւորութիւններն ապացուցեց Պեկինի Օլիմպիական խաղերի բրոնզէ մեդալակիր, Աշխարհի առաջնութեան արծաթէ մեդալակիր եւ Եւրոպայի չեմպիոն ռոման Ամոյեանը: Հայ ըմբիշը Եւրոպայի չեմպիոն դարձաւ մինչեւ 55կգ քաշային կարգում՝ վստահ յաղթանակ տանելով իր բոլոր

մրցակիցների նկատմամբ: Ամոյեանը բոլոր մենամարտերում չոր հաշուով յաղթանակեց: Եզրափակչում նա, չնայած գլխի վնասուածքին երկու շրջաններում 1:0 եւ 4:0 հաշուով պարտութեան մատնեց ադրբեջանցի մարզիկ Վուզար Ռագիմովին, որը ներկայացնում էր Ուկրաինան:

84կգ քաշային կարգում բրոնզէ մեդալակիր դարձաւ Արթուր Շահինեանը: Նա երրորդ տեղի համար պայքարում 3:1 եւ 2:0 հաշուով պարտութեան մատնեց գերմանացի Եան Ֆիշերին: Եւրոպայի առաջնութեան բրոնզէ մեդալ նուաճեց նաեւ Պեկինի Օլիմպիական խաղերի բրոնզէ մեդալակիր, Աշխարհի առաջնութեան արծաթէ մեդալակիր եւ Եւրոպայի բազմակի չեմպիոն Իւրի Պատրիկէէւը 120կգ քաշային կարգում: Նա առաւելութեան հասաւ Եօխան Էուրենի նկատմամբ (Շուէդիայ): Ապրիլի 3-ին ելոյթ կ'ունենան երեք քաշային կարգերի ըմբիշներ:

Յայտարարութիւններ

ՀՐԱԻԻՐՈՒՄ ԵՆՔ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

«Վերածնունդէ Երաժիշտ-

Կատարողների ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Մրցոյթ-փառատօնին

2011-04-02

Բոլոր նրանք, ովքեր ցանկութիւն կ'ունենան մասնակցելու «վերածնունդէ փառատօնին, կարող են համապատասխան մասնագիտութեամբ յայտ ուղարկել մինչեւ ապրիլի 10-ը՝ հետեւեալ էլեկտրօնային հասցէներով՝ karine_avd@mail.ru, vahagn.hov@mail.ru:

Մանրամասներին եւ յայտաձեւերին ծանօթանալու համար կարող էք այցելել www.gyumriconservatory.com կայքէջը:

**ՀՀ սփյուռքի նախարարութեան աշխատակազմի
համահայկական ծրագրերի վարչութիւն**